

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### ԳԵՂԱՓՈԽՆԵՐԸ ԿՈՒՌՈՒՄ ԵՆ...

Հազիւ ազատած մահաւան ճանկերից—ի մեծ տըր-  
րուծիւն բոլոր զգացող սրտերի—նա, ժամանակակից  
ներոնը, իր մարող աչքերը պետութեան շուրջը դար-  
ձրեց և հիացմունքով լսեց օրվայ նորութիւնը, Գ Ե Կ Ե  
Վ Ո Ը Ն Ե Ր Ը Կ Ո Ը Ո Ը Կ Ե Ն:

Երեսուն տարուց ի վեր՝ սուլթանական տենչա-  
չալի ծրագիրն էր այդ քաղաքական երկրորդ «Աստ-  
ւածը», որի առջև ծնկաչոք՝ նա փրկութիւն էր հայցում  
իր խարխուլ գահի, խարխուլ թագաւորութեան, խար-  
խուլ ապագայի համար: «Եթէ չեն կուռում, պէտք է  
կուռնենք», կրկնում էր նա անդադար՝ իր գործակալ-  
ներին, բարեկամներին, իր դիւական քաղաքականու-  
թեան փորձաթիւ, բայց կոյր հետևողներին:

Եւ յաճախ—ծանր է այդ, բայց պէտք է խոստո-  
վանիլ—նա իրականացած տեսաւ իր ծրագիրը—կուռ  
պետութիւնների միջև, երբ մի ա գ ու մ ն էր պէտք  
Մեծ Մարդասպանին խելքի բերելու համար. կուռ  
«Հպատակների» շրջանում, երբ մի ու թ ի լ է ն էր  
հարկաւոր, բռնապետութեան դէմ գրոհ տալու համար.  
կուռ ազգով մէկ, բայց կրօնով տարբեր համայնքների  
մէջ, երբ դ ա շ ն էր պէտք ինքնապաշտպանութեան  
համար, և այժմ էլ բուռ բոլգարի ու յոյնի մէջ, երբ  
ստրուկ, բռնաւորի գարշելի ոտքերի տակ ձգւած եր-  
կիրը ազատելու համար՝ հրամայական պահանջ է  
չ ա ղ կ ա պ ե լ երկու ազգերը և ձեռք ձեռքի տւած  
մղել դէպի ազատութեան մարտաբեմը:

Աւ որքա՞ն սխրեցուցիչ, սիրտ ձմրող ու յուսահա-  
տական են նորագոտ Բոլգարիայից և դեռ ևս ստրուկ  
Մակեդոնիայից եկող լուրերը—ժողովուրդ ժողովրդի  
եղբայր եղբոր դէմ, վայրենի զգացումների բռնկումն,  
մթութիւն քաղաքական գիտակցութեան, յարձակումներ,  
մի տեղ աւերումն մակեդոն-բոլգարացիների, միւս տեղ՝  
աւերումը յունական տների, կուռ, թալան, վիրաւո-  
րանք և նոյնիսկ արիւն, խաղաղ ժողովրդի արիւն...

Ով է մեղաւորը: Յոյն կառավարութեանը կարծիքով՝  
Բոլգարիան: Բոլգար կառավարութեան ասելով՝ Յունաս-  
տանը: Յոյների կարծիքով՝ բոլգար հայրենասէրները:  
Բոլգարների խօսքով՝ յոյն պոլիտիկոսները: Եւ այդ կոյր

ու անմիտ մեղադրանքների հանդէպ, ահա Մեծ-Մար-  
դասպանի «բերկրալից «գիպլոմատիական սաստը, որով  
„հրահանգում է Բոլգարիային՝ խիստ միջոցներ ձեռք  
առնել՝ յոյների կեանքն ու գոյքը ապահովելու“:

Որպի՞սի անարգանք, որպի՞սի ծաղր ու ծանակ բալ-  
կանի նորակազմ պետութիւններին: Ոճրագործը՝ դա-  
տաւորի դերում. ոճիրը՝ առաքինութեան ծիրանիով:  
Անցեալ տարի նոյն ոճրագործն էր, 300 հազար հայե-  
րի մորթողը, որ լրբենի բաջութիւնն ունեցաւ կոչ ա-  
նելու Պետերբուրգի «Կարմիր—եղբորը»՝ ապահովել  
«Սուլթանի հայ հպատակների կեանքը կովկասում», և  
այս տարի նոյն չարագործն է, «գեափուրական կուռ-  
ների» անման հեղինակը, բոլոր կեանքերի և գոյքերի  
աւերիչը, որ դարձեալ կոչ է անում Սօֆիայի կառա-  
վարութեան՝ «ապահովել յոյն ժողովրդի կեանքն ու  
գոյքը», հարկաւ՝ ապաւինած պոլիտիկոսների անծայր  
յիմարութեան, համոզւած, որ բանի գեափուրներն  
կուռում, միմեանց միմն են ուտում, ինքը կարող է  
կատակերգել և նոյնիսկ հրամաններ արձակել...

Եւ այդ նենգամիտ անարգանքի հանդէպ անգամ,  
ինչպէս և հանդէպ այն հսկայական տանջանքի, որ  
ծանրանում է Մակեդոնիայի բոլոր ժողովուրդների  
պարանոցին, հրապարակ չեկաւ Աթէնքում և Սօֆիա-  
յում՝ մի ա բ ա ն մի բողոք, արդարութեան պա-  
տասխանը՝ որ ասէր՝ «Գուք էք, ոճրագործ, այս բոլորի  
պատասխանատուն. դուք, որ արիւն, ատելութիւն, կուռ  
տարածելով ամբողջ Մակեդոնիայում՝ տարածում էք  
այդ ատելութիւնն ու կուռը հարեան երկրների մէջ,  
ուր տգէտ խուժանը՝ գլխաւոր չարիքը մոռացած՝ իր  
ցասումն ու թոյնը թափում է այնտեղ, ուր միայն զո-  
հեր կան, բայց ոչ յանցաւորներ»:

Ամօթ քեզ, Աթէնք, անարժան ժառանգ մեծանուն  
հայրերի, և բեզ, երեքուն Սօֆիա, ազատութեան տհաս  
զրօշակակիր, որ անկարող եղաք, ձեր կ ու ա թ ա թ դը-  
րացիներով հանդերձ, գլորել մրցումի ու պառակտման  
կուռքը, թափ տալ ձեզանից նենգ գիպլոմատի փոշին,  
և ձեռք ձեռքի տւած՝ գրոհ տալ դէպի ընդհանուր  
թշնամին՝ Իլդրզի կառտունը, որ անյագորէն ծծում  
է մեր ժողովրդների արիւնը ու ծիծաղում, որ կուռ-  
ցնում է ձեզ, «ստրուկ ազատներիդ», ու ծափ տալիս...

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Բ Ը  
Մ Ի Չ Պ Ա Ր Լ Ա Մ Ե Ն Ց Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Ա Ռ Ձ Ե Ի

Յուլիսի 23-ին, Լօնդոնի մէջ բացւեցաւ միջպարլամենտական ժողովը, ներկայութեամբ աւելի քան 600 պատգամաւորներու՝ եկած զանազան երկրների պարլամենտների կողմէն:

Նկատելով նորա կարևորութիւնը, ընդհանուր պրօպօզանտի տեսակէտէ, այլ և՛ այն դերը, որ այդ ժողովը կրնայ խաղալ՝ մեր խնդիրը ԼաՏէյի կօնգրէին ներկայացնելու գործին մէջ, «Դրօշակի» խմբագրութիւնը միջոցներ ձեռք առաւ հայկական դատը ժողովի առջև դնելու, և ի միջի այլոց, հեռագրական դիմում մը ըրաւ Դիտտերնել գըր կօնստանի, որ փոխնախագահն էր ժողովի, մեր դատի ակնաւոր պաշտպան Ֆրանսիս գըր Պրեսանսէին և Բելգիացի ծանօթ պատգամաւոր ու հայասէր Ժօրժ Լօրանին:

Ահա մեր հեռագիրը:  
«Նկատի ունենալով ձեր համակրանքը դէպի մեր դատը՝ հարկագրած ենք խնդրելու ձեզ, որ նեղութիւն յանձն առնէք, յանուն արգարութեան և խաղաղութեան գործի, որի քաջարի պաշտպանն էք, յարուցանելու Միջպարլամենտական կօնֆերանսի առջև հայկական խնդիրը, ճանաչած միջազգային դաշնագրերով: Այդ դիմումն ընելու համար մենք ունինք հիմնաւոր պատճառներ: Թիւրքաց Հայաստանի մէջ իրերու դրութիւնը օրէցօր կը դառնայ ծանր, վտանգաւոր: Արտաքին հանգստութեան դիմակի ներքո՛յ՝ հայաջինջ քաղաքականութիւնը իր գործը կը տեսնէ անարգել և հետեւողական: Բռնի գաղթ վանի վիլայէթի մէջ, կատաղի հալածանք Տրապիզոնի և Էրզրումի կողմերը, անվերջ սպանութիւններ Ալաշկերտ և Խարբերդի շրջանի մէջ, հալածանք և բռնութիւններ Չէյթուների կողմերը, եկեղեցական գոյքի բռնի գրաւումն Կիլիկիա, խմբական բանտարկութիւն Սասուն և Մուշ, — այս բոլորը՝ ծրագրւած նախօրօք՝ կ'իրագործուի սուլթանական կառավարութեան ձեռքով, հակառակ յաճախ կրկնւած խոստումներուն՝ տրւած պաշտօնական Եւրոպային, միջազգային դաշնագրերը ստորագրող պետութիւններուն: Չենք խօսիր կովկասեան հայութեան ծանր վիճակի մասին, նկատի առնելով որ անիկա դուրս է միջազգային վերահսկողութեան շրջանակէն, բայց կը կարծենք, որ խաղաղութեան գործի պաշտպանները միջպարլամենտական ժողովի մէջ՝ իրենց պարտքը պիտի համարեն դարձեալ մի անգամ իրենց երկիրներու պարլամենտների ուշքը դարձնելու Հայաստանի վրայ, որը 28 տարուց ի վեր կը սպասէ այն բեֆօրմներու իրագործման, որու պաշտօնական պարտաւորութիւնը յանձն առաւ Եւրոպան՝ Բերլինի կօնգրէի առջև: Եւ անելով ձեզ ներկայ դիմումը Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ, որը 16 տարիէ ի վեր անընդհատ կռիւ կը մղէ բռնապետութեան և նրա բէժիմի դէմ, մենք յոյս կը տածենք որ դուք, ինչպէս և կօնֆերանսի միւս անդամները՝ աջակից կը կանգնիք հայ ժողովրդի դատին, որը միաժամանակ արգարութեան և խաղաղութեան դատն է»:

Մեր բարեկամներու մի խումբ, աջակցուած այլ հասակներու կողմէն, յուլիս 25-ի նիստին մէջ, Ժօրժ Լօրանի միջոցով, վերտօնի պատգամաւոր, ներկայացուց, ոչ առանց դժարութեան, հայկական հարցը:

Ահա ասիկ արտասանած ճառը:  
Ժ. Լօրան — «Գիտեմ, որ ժողովի կանոնագրութիւնը հասկանալի խոհեմութեան նպատակով մը կ'արգիլէ ժողովի առաջ բերել քաղաքական ներքին և այժմէական հարցերը: Բայց չեմ կարծեր այս կանոնի դէմ շարժած լինել՝ հրաւիրելով ձեր և մեր Մշտական Խորհրդին ուշադրութիւնը միջազգային մի քանի դաշնագիրներուն յայտնի անգործադրութեանը վրայ, նոյնիսկ այնպիսի դաշնագրերու, որոնք բոլոր պետութիւններու ստորագրութիւնը կը կրեն և կը կանոնաւորեն, հասարակաց շահերու համար, եւրոպական հարցերը:

«Խնդիրը յատկապէս կը վերաբերի Բերլինի Դաշնագրութեան բացայայտ տրամադրութիւններուն, որոնք օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներուն երաշխաւորած են օրինաւոր բէժիմ մը, որը կարողանայ անոնց ապահովել կարգի-կանոնի, անդորրութեան, և արգարութեան նւազագոյն չափը, որու չգոյութեան պարագային մարդ բարբարոսութեան վիճակին մէջ կ'ապրի: Արդ ամէն ոք գիտէ, և ես այս մասին պնդելու պարտքը չեմ վզար, որ Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդները, որոնք միջազգային օրէնքներու առարկայ դարձած են, չեն վայելիր, ինչպէս նաև մահմեդական ազգաբնակչութիւնը, քաղաքակիրթ կեանքի տարրական պայմանները և յանձնւած են, մասնաւորապէս հայ ժողովուրդը, ամենաահռելի կամայականութեան և ամենայնոքի անապահովութեան բէժիմին: Դոյնն է Մակեդոնիոյ մէջ:

«Այս արիւնտ նահանգներու դէպքերու պատկերը չպիտի գծեմ: Դուք զանոնք կը ճանչնաք և տեղն ալ չէ: Բայց ինձ կը թւի, որ հանդիսաւոր դաշնագրերու յայտնի անգործադրութիւնը պիտի դառնայ ձեր գործունէութեան առարկայ:

«Պարտաւոր ենք պահանջելու, որ դաշնագրերը գործադրուին: Եթէ ոչ զանոնք կնքելէ ինչ օգուտ: Ինչ բանի կը ծառայեն մեր բոլոր ըրածները և հասարակութիւնը ինչ վստահութիւն կրնայ ունենալ մեր ջանքերու վրայ: Արդ, փորձառութիւնը կ'ապացուցանէ, որ եթէ որոշ երկիրներու՝ մասնաւոր Թիւրքիոյ հետ դաշնագրերու գործադրութիւնը բռնի ոյժով չպահանջուի, անոնք կը մնան առանց գործադրութեան: Այսպէս Բելգիան և Ամերիկան օսմանեան կառավարութեան հետ այս պահուս վէճ մը ունին, որու համար չեն կարող ոչ մէկ գոհացում ստանալ որովհետև գիտեն որ մէկը չը կրնար իսկ միւսը չուզեր զինու զօրութեան դիմել: Այդպիսի կացութիւն մը պէտք է որ ձեր ուշադրութիւնը գրաւէ:

«Տկարներն և խաղաղասէրները զոհւելու չեն: Հանդիսաւոր դաշնագրերը Բելգիայի և Ամերիկայի կ'երաշխաւորեն իր քաղաքացիները դատելու իրաւունքը, որոնք Թիւրքիոյ մէջ յանցապարտ կը նըկատուին: Արդ բելգիական հպատակ մը և ամերի-

կեանք քաղաքացի մը, հակառակ դաշնագրերու, այս պահուս մահուան դատապարտած և բանտարկուած կը մնան և իզուր բելգիական կառավարութիւնը թիւրքիայէն պահանջեց, որ այս հարցը ենթարկեն Լահէի ատեանին իրաւարարութեան, որուն իրաւասութեան կը պատկանի իրօք: Մեզ պատասխանեցին, որ եթէ թիւրքիան Լահէի ժողովին մասնակցի, դաշնագիրը, որուն պիտի յանգի ժողովը, չպիտի վաւերացուի սուլթանին կողմէ, և մեր իրաւունքը, զուրկ ոյժի նւիրագործումէն, կը մնայ մեռած տառ. բայց նոյնիսկ այս կարգի դժարութիւններու վերջ տալու համար է որ Լահէի ատեանը կազմեցաւ:

Ն ա ի ա գ ա հ ը.— Չեմ կրնար թոյլ տալ յարգելի բարեկամիս, որ հակառակ մեր կանոնի, այս հարցի մասին շարունակէ խօսիլ:

Ժ. Լ օ Ր ա ն.— «Նը կարծէի որ իմ առաջարկս — միջազգային դաշնագրերու անգործագրութեան հարցը, ենթարկել մշտական խորհրդի ուսումնասիրութեան — մեր ներքին կանոնագրին բնու հակառակ չէ: Պարոններ դ՛նտուրնէլ դը Կոնստանտին, ճ. Ուիլյանի և Ու. Ժ. Բրիանի հետ պատիւ ունիմ խնդրելու, որ խորհուրդը յառաջիկայ նիստի համար բարեհաճի ուսումնասիրել դաշնագրերու անգործագրութեան այդ ծանրակշիռ հարցը, մասնաւորապէս Բերլինի Դաշնագրի հարցը, որ Օսմանեան կայսրութեան քրիստոնէայ ժողովուրդներուն, քաղաքակրթութեան բեժիմի հանդիսաւոր երաշխաւորութիւնը տւած էր Եւրոպայի անունով: Հայերը ինձ խնդրած են, որ մինչև հոս լսել տամ իրենց վշտի աղաղակը և օրինական բողբոջ՝ անհաւասարութեան և կամայականութեան բեժիմի դէմ, որը շարունակել կը նշանակէ բռնաբարել դաշնագիր մը, որ կը կրէ սուլթանի և բոլոր մեծ պետութիւններու ստորագրութիւնը»:

Առաջարկը միաձայն ընդունեցաւ: Խորհուրդը միջոցներ ձեռք պիտի առնէ՝ հայկական խնդիրը Լահէի ժողովին ներկայացնելու:

**«Դ Ր Օ Շ Ա Կ Ի» Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր**  
(ՈՒՂԱՐԿԻԱՍ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻՍ, օգոստոսի 4

Դարձեալ ընդհարում Շուշու մէջ: Այրւած են թուրքերի 200 տուն: Թուրքերի կորուստի թիւն է 190, հայերինը՝ 12: Նակերանը գրաւած է հայերի ձեռքով: Թուրքական ահազիմ խմբերը, որոնք ուզում էին յարձակել մի մասը՝ Շուշու, միւս մասը՝ շրջակայքի հայ գիւղերի վրայ, յետ մղւեցին: Յուսահատութիւնը թուրքական շրջաններում մեծ է: Աղղամը դեռ ևս թուրքերի ձեռքին է, որոնք այդ կողմերում դառնում են օրէցօր աւելի յամղուգն: Գեներալ Գոլոշչակով առ այժմ անկողմնապահ է:

ԹԻՖԼԻՍ, օգոստոսի 8

Դումայի լուծմամբ լուրերի ազդեցութեամբ տակ՝ թուրք բեզերը և աղմիստարացիայի կասկածելի տարրերը մորից զլուխ բարձրացրին: Շուշու կողմերից եկող լուրերը անհամապատասխան չեն: Զանգեզուրում մահմեդական աւազա-

կախմբերը բացարձակ յարձակման պատրաստութիւններին մէջ են: Տեղական իշխանութիւնը, որ մինչև այժմ բոլոր աւազակների երես տուղմ էր և առաջին պրօվօկատորը, անկարող է ձեռնուրձ գսպելու յամղագացած թուրքերին: Հեռագրներով օգնութիւն են խնդրում Թիֆլիսից: Սպասուում են մոր և խոշոր ընդհարումներ:

ԹԻՖԼԻՍ, օգոստոսի 14

Թուրքերի մոր յարձակումը Շուշու տեղի ունեցաւ օգոստոսի 4-ին (մոր տոմար): Հայերը դիմադրեցին և հաւաքելով բոլոր ոյժերը՝ ներս մտան թուրքական թաղը, գրաւեցին նրանց դիրքերը՝ երկու օրւայ տալ կուից յետոյ: Խոշոր հարւած կրելուց յետոյ՝ թուրքերը զիմաղաղար խմբեցին, որը հայերը ընդունեցին, դեկով հետեւեալ պայմանները. ա) աւերել Դիկտանդուրու և Գիվերագ դիրքերը. բ) արգելել թուրքական մոր խմբերի մուտքը քաղաք. գ) վարձատրել Մահակ Միրզայեանի ըմտամիջը, որը եղել էր պրօվօկատիօնի առաջին զոհը. դ) աքսորել Գամձակի նահանգից բոլոր պրօվօկատորներին: Բոլոր պայմանները ընդունեցին՝ բացի առաջինից: Սակայն մոյմ գիշերն և եթ թուրքերի կուստէր տարը, բեզերի դեկավարութեամբ, վերսկսեց հրացանածգութիւնը. բայց՝ կատաղի դիմադրութիւնից յետոյ՝ կորցրին Դիկտանդուրու դիրքը, տալով 40 սպանւած: Թուրքերը, որոնք զիմաղաղարի միջոցիմ օժանդակ ոյժեր էին ստացել, օգոստոսի 5-ին դարձեալ հրացանածգութիւն սկսեցին Աղհարագ դիրքից, որը յետ էր տրւած թուրքերին՝ գնդապետ Չերմեալսկու պնդումով. բայց այս անգամ յաղթեցին և նրանց դիրքը գրաւեց: Այդ դիրքի վրայ հայերը գտան մեծ քանակութեամբ վառօդ և մաւթ: Թուրքերին աշողեց, մութի շմորհիւ, փախցնել իրենց թմրամօթը: Հայերի կորուստն է՝ 24 սպանւած և 102 վիրաւոր: Թուրքերի կորուստի ամբողջութիւնը դեռ յայտնի չէ. նրանց այրւած տներին թիւը 200-ից աւելի է: Թուրքերը յարձակումն գործեցին Շիհկեր, Սօս և Նախիշեւանի գիւղերի վրայ, բայց յետ մղւեցին: Օգոստոսի 19-ին թուրքերը յարձակեցին Էնքեանդի վրայ: Երեք ժամայ կուից յետոյ՝ նրանք ստիպեցին յետ քաշել՝ խոշոր կորուստներով: Հայերից սպանւած են երեք հոգի: Ժամամաւկաւոր խաղաղութիւն է հաստատւած:

**Վ Ե Ր Զ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր**

Օգոստոս 25-ին, «Դրօշակի» խմբագրութիւնը յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, ուղարկեց Գրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Միացեալ-Նահանգների արտօքին գործերի մինիստրութիւններին մի դիմում՝ հայկական խնդիրը Լահէի ժողովին ներկայացնելու համար: Այդ դիմումին կցած է մի գ օ ս ս ի է, բաղկացած 14 մեծադիր երեսներից, որ ցուցակագրւած են թիւքաց շայաստանում կատարւած բռնութիւնները, սկսած 1906 թւի յունւարի 1-ից մինչև յուլիս 1-ը:

Թիֆլիսում, կառավարութեան կարգադրութեամբ դադարեցրւած են հայոց և վրաց մի քանի լրագիրներ, և ի միջի այլոց «Աւեր»:

Օգոստոսի 25-ին Պետերբուրգում տեղի ունեցաւ մի կարեւոր տէրրօր, ուղղած մինիստր-նախագահ Ստոլիպինի դէմ: Տարաբախտաբար՝ Ստոլիպին կենդանի մնաց և զոհերը եղան կողմնակի անձինք: Տէրրօրի կազմողն է սօց.-յեղափոխականների մարտական խումբը:

# Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Ի Ա Ն Կ Ի Գ Ր Ա Ի Մ Ա Ն Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ի Ն

## (1896—1906)

### I

#### Բ Ա Բ Կ Է Ն Ս Ի Ի Ն Ի

Նւէր գոհերի յիշատակին



Նա է, Բաբկէնը, քիչ խօսող, շատ կատարող: Պօլիս է ապրում, բայց ոչինչ պօլսական. ո՛չ սեթեթ շարժումներ ու ձևեր և ո՛չ շողորթ թափեր: Գաւառացի է նա, բառի բուն նշանակութեամբ—պարզ՝ որպէս գեղջկական բարբը, համեստ՝ որպէս գիւղական անշուք կեանքը:

Խոշոր աչքերը համակրանք ու վստահութիւն են ներշնչում. նրանց մէջ կարգացում էր իր ամբողջ հոգու ոյժը—խելք, գործ և յանդգնութիւն: Նա անում է այն, ինչ խելքն է թելագրում, յանդուգն է այնտեղ ուր գործն է պահանջում: Նա ուրիշին չի ենթարկում, կատարում է ինչ որ լաւ է իր կարծիքով: Այ դի խնդրել չի սիրում՝ ամեն ինչ իր ձեռքով է կարգադրում:

Գործից դուրս նա մի անհոգ թռչնիկ է—միշտ ժըպիտը շրթունքին, երգի յանգերը բերնին: Տանը, Բերայի մի խիտ փողոցում, եթէ զբաղմունք չունի, նրստում է իր լուսամուտի գոգում և ոտքերը փողոցի կողմ կախած՝ չարածձի երեսայի պէս երգում: Շատ անգամ են գիշերապահները տեսնում նրան այդ դիրքում և արդէն վարժուել են լսել նրա երգը: Իր սովորական երգն է՝ «Դաւորիկցի կտրիչ մ'եմ խորդ»: Այդ երգը, իհարկէ, արգելած է Պօլսում, բայց շըրջապատը—հայ, թուրք—այնքան էին լսել նրանից միւսնոյն երգը, որ սովորական է դարձել... Բաբկէնին «լաւ» են ճանաչում՝ ամենքը. նա մի «անմեղ» ու մշտազբաթ երիտասարդ է բոլորի համար: Իսկ մշտածիծաղ մարդիկ Պօլսում չեն հետաքրքրում ոստիկանութեան ազէնտներին...

1906 թիւն է՝ ամառը: Էրեկոյեան մօտ ժամը 9-ին Գալաթայի նեղ ու մութ փողոցներից մէկում կանգնած է Բաբկէնը. խոշոր ու սև աչքերը չռած դէպի աջ տանող փողոցը՝ անհամբեր սպասում է: Նա դիտմամբ է կանգնել այնպիսի փողոցում, ուր վիտում են լրտեսներ ու ոստիկաններ: Կասկածելի մարդը այդ թաղից խոյս է տալիս, ինչպէս վարակած տեղից նրա արտաքինն ևս կասկածելի ոչինչ չ'ունի ընդհակառակը՝ նա հաւատ է ներշնչում ամեն մի մանրախոյզ լրտեսի 2է՞ որ նա էլ նրանց պէս գլխին մի մեծ ու լայն ֆէս ունի, որ իջնում է մինչև աչքերը, իսկ

հագուստը՝ անխնամ ու թափթփած, կարծես հագին չը լինի, այլ քաշ ընկած, Պօլսի լրտեսներին յատուկ ձևը, որ այնչափ ճարպիկ կերպով Բաբկէնը իւրացրել էր ձեն է շինել: Նա տարիներով այդպէս է շըջել Պօլսի թաղերում ամենավտանգաւոր գործերի մէջ և ոչ մի տեղ էլ չեն հարցրել, թէ ով է կամ ուր է գնում: Նա ջերմեռանդ հաւատ ու վստահութիւն ունի իր արտաքինի վրայ և դրանով էլ ու մուտք ունի ամեն ծակ ու ծուկ:

... Նրա համբերութիւնը հասնելու վրայ էր. ժամագրութեան վայրկեանն անցնում էր: Բայց ահա հեռուից երևաց ծանօթ ընկերը, որ հետն ունէր իր ըսպասած նորեկին: Աւղեկիցը նորեկի ականջին կամացուկ յայտնեց, որ Բաբկէնը անկիւնում կանգնողն է, որին չը պէտք է մօտենալ, այլ հետևել հեռուից: Ասաց և ինքը յետ դարձաւ. Բաբկէնը իր անհոգ քայլածքով, առաջ անցաւ մենակ՝ տեղ-տեղ շաղկապով, տեղ-տեղ ինչ որ թիւրքերէն երգ փնթփնթալով: Վերջապէս Բաբկէնը մտաւ մի տուն, բարձրացաւ երկրորդ յարկը և դռան առջև սպասեց: Նորեկը նրա ետևից հասաւ: Այդտեղ միայն Բաբկէնը բռնեց նորեկի ձեռքը և ծիծաղելով ասաց. «Մեր երկրին օրէնքն է այս. բաւական ժամանակ ետևէն քայլեցնելէ վերջն է, որ կը զիջանինք բարեւել նորեկ մը», և ապա աւելացրեց «ինչ որ ասեմ տանտիկնոջ, դու ոչինչ մի խօսի, միայն ծիծաղի»:

Դուռը բացուում է: Մի խոշոր կին է գիմաւորողը: —Քեզ մի լաւ տնւոր եմ բերել, Էլլէն տուտու, ասաց Բաբկէնը թիւրքերէն: —Շատ շնորհակալ եմ, էֆէնդի: —Պօլիսը չը տեսած մարդ է, ուզում է մի քիչ զբօսնել, ասում է նա և նորեկի երեսին նայում. վերջինը միամիտօրէն ծիծաղում է: Նորեկը ապահով տեղ ունի, ո՞վ կարող է մտածել, թէ նա մի դաւադիր է թիւրք կառավարութեան դէմ: Նրան յանձնարարողը Բաբկէնն է. իսկ Բաբկէնը վրստահելի տղայ է: Իւ այդպէս քանի օտարներ կային Պօլսում, որոնց տեղը միայն Բաբկէնը գիտէր և որոնց նա էր յանձնարարել տանտերերին: Բոլորն էլ ապահով էին:

Ամբողջ օրը Բաբկէնը ոտքի վրայ է: Նա միևնոյն օրը և՛ Բերա է, և՛ Գալատա, և՛ Ստամբուլ, և՛ Սամաթիա, և՛ Սկիւզար: Նա տեսնում է թէ ուումբեր ձուլող վարպետին, թէ կառապանին և մակուկավարին՝ ձուլած ուումբերը Բոսֆորի մի ափից միւսը փոխադրելու, թէ՛ արտասահմանից դիմադիտ ու պայթուցիկներ բերող ճամբորդին՝ նրա մօտ եղած նիւթերը ստանալու, թէ՛ հարկաւոր եղած ընկերներին՝ նրանց անհրաժեշտ զգուշութիւններն ու հրահանգները տալու: Նա փողոցում համարեա ոչ որի հետ չէ տեսնում. այցելում է ամենքին, որոնց պէտք է տեսնել: Իսկ եթէ բան է, փողոցում պատահում է մէկն ու մէկին, նա

ունի իր որոշ նշանները. որոնցով պարզ հասկացնում է, թէ ուր իրեն սպասել: Նրա ձեռքի մի շարժումը յայտնում է ընկերին, թէ ետից եկողը լրտես է, պէտք է զգուշանալ: Նա ճանաչում է համարեա բոլոր լրտեսներին:

Օգոստոսի 4-ին կիրակի օրը վերջին ժողովն է— ծրագրելու Օսմանեան բանկի գրաւումը: Ժողովը Բերայի մի անկիւնումն է, մի պառաւ աղջկայ տանը, որ իր ամբողջ շինութիւն դրել է յեղափոխականների տրամագրութեան տակ: Նա շատ երջանիկ է զգում իրեն, որ մասնակցում է այդ խորհրդաւոր ժողովին և պատրաստականութիւն յայտնում իր տանն ընդունել ամեն բան, ինչ հարկաւոր է գործի յաջողութեան համար: Այնտեղ է և մի ուրիշ օրիորդ: Մնացածը տրզամարդիկ են: Բոլորը միասին 13 հոգի:

Առաջարկած ծրագիրն ընդունւում է միաձայն: Բանկը պիտի գրաււի օգոստոս 19-ին՝ սուլթանի գահակալութեան օրը: Բարեկէնի ուրախութեանը չափ չը կայ:—Յեղափոխական մարտախումբը պէտք է տիրանայ դրամատանը և պիտի ներկայացնէ սուլթանի և Եւրոպայի ներկայացուցիչներին կարեւոր պահանջներ:

Գործը պահանջում է լինել յանդուգն. Բարեկէնը աւելի քան յանդուգն է ընկերներով: Եւ գալիս են ամեն օր նոր-նոր մարդիկ այդ հռչակաւոր տունը, իրենց բռններով միասին: Ռուսներ են գրանք: Մէկ-երկու օրից՝ տունը ներկայացնում էր մի շտեմարան գանազան մեծութեան ուսմանը և պայթուցիկ նիւթերի: Աշխատանքը եռում է այնտեղ: Երիտասարդներ, օրիորդներ լցնում են ուսմանը և դարսում մի կողմ:

Բարեկէնը միշտ արթուն՝ հսկում է եկող գնացողին, կամ վազում, մոռացած մի կարգադրութեան ետեւից: Երբեմն էլ յոգնած ու շնչասպառ ներս մտնում ուսման շտեմարանը և ձեռքն առնելով երկու մեծ ուսման բերից մէկը, որոնց վրայ ոսկետառ ձուլած քով կարգացում են «Է. Յ. Գաշնակցութիւն» ոգևորած ասում է. «Ա՛հ, եթէ ասիկա կարելի ըլլար մինչև Երզրզ հասցնել, ես գիտէի, թէ ինչպէս պէտք է սուլթանը խօսքի բերել»...

Աշխատանքը առաջ է տարւում չը տեսնած եռանդով: Ռուսները շտապով փոխադրւում են որոշած դիրքերը: Ամեն ինչ պատրաստ է բանկի մօտիկ մի հիմնարկութեան մէջ: Իսկ անձնուրաց յեղափոխականներ բանկը գրաւելու համար—որչափ կ'ուզէք: «Բարեկէնը բոլորը կարգադրած է, հոգ մի՛ ընէք», — ասում են ամենքը:

Յանկարծ լուրը եկաւ, որ շնչակեանները որոշել են կիրակի օգոստոս 18-ին, պատարագի ժամանակ մայր եկեղեցում սպանել պատրիարքական տեղապահ Բարդողիմէոս եպիսկոպոսին: Լուրը կայծակահար արեց բոլորին: Մի Բարդողիմէոսի պատճառով ամբողջ գործը վտանգել տալ... Իսկոյն բանակցութիւն սկսեց շնչակեանների հետ, որ յետաձգեն: Բայց նրանք պընդում են, Բարեկէնը քուն չունի: Այդքան աշխատանք ու պատրաստութիւն ձեռքից բաց թողնել—անկարելի է: Անմիջապէս արտակարգ ժողով գումարուեց օգոստոս 11-ին, կիրակի երեկոյեան: Բարեկէնը պնդում է, որ բանկի գրաւումը լինի անպատճառ օգոստոս 18-ից

առաջ: «Սպասելու կարիք չը կայ, մարդիկ որչափ ուզէք, պատրաստ են, ուսմանը բոլորն էլ տեղաւորւած են դիրքերում»: Ժողովը որոշում է բանկը գրաւել չորեքշաբթի, օգոստոսի 14-ին կէսօրին, թիւքական ժամը 6-ին:

Չորեքշաբթի է:

Ամեն մարդ իր դիրքումն է: Բանկի մօտ գտնուող կրթական հիմնարկութեան մէջ, ուր առաջուց մթերւած են ուսմանը ու պայթուցիկները, ժողովւած է մասնակցողների խումբը: Ամեն մէկն ունի ձեռքին երկու ուսման և մի ասորձանակ: Աւելորդ ուսմանը ու պայթուցիկը տեղաւորւած են տոպրակներում ու պայտակներում: Ժամը 6-ն է: Սրտերը տրոփում են: «Վերջին համայն, տղերք», ձայն է տալիս Բարեկէնը: Բոլորը վերջին համայն են տալիս իրար: Խորհրդաւոր ժամ է:

«Պարօլը» Ազատութիւն բառն է կրկին յիշեցրեց Բարեկէնը: Երկու ուսման ընկերների պատուիրւած էր բանկը մտնելուն պէս՝ դռան երկու կողմը կանգնել «Ազատութիւն» կանչողին ներս առնել, հակառակ պարագային՝ գնդակահար անել տեղն ու տեղը:

Եւ շարժւում են շտապ: Ատրձանակի առաջին գընդակներից ընկնում են բանկի դռան պահականները: Գուռը մերոնց ձեռքն է: Ետեւից եկողները «ազատութիւն» են գոչում և ներս անցնում: Ներսը պայթող ուսմանը արդէն սարսափահար են արել հարկաւոր պաշտօնեաներին: Բարեկէնը վերջապահ էր. նա ամենից ուշ պիտի մտնէր, որպէս զի ընկերներից մէկն ու մէկը դուրսը չը մնայ: Մէկին նա սպասում էր որ դեռ չը կար. մի անգամ ևս նայեց ու վազեց դէպի դուռը:

Աղմուկ, իրարանցում ամեն կողմ: Բանկին կպած Բեթիի հիմնարկութեան պահական զինւորները չփութւած, գլուխները կորցրել էին և չը գիտէին ուր վազեն, ում օգնեն կամ ում դէմ կուեն: Մի զինւոր միայն, որ այդ միջոցին բանկի շինութեան անկիւնումն էր, նկատում է, որ աղմուկ բարձրացնողները մի խումբ մարդիկ են, որոնք շտապ ներս են մտնում բանկը առանց հրամանի, ինստինկտաբար՝ հրացանը պարզեց դէպի բանկի դուռը և պարպեց վերջին մտնողի վրայ: Բարեկէնն էր նա «Ազատութիւն» բառը կիսատ մնաց բերանում: Գնդակը մէջքից անցաւ և գլորեց Բարեկէնին բանկի շէմքում: Մահացող հերոսի ձեռքի երկու ուսմանը էլ ընկնելիս այնպիսի մի խլացուցիչ պայթուցիկ գորգացին, որ փողոցի բազմութիւնը, Բեթիի բոլոր պահական զինւորները սարսափած՝ դէպի երկրորդական փողոցները փախան: Այդ չը չը համարձակւեց մօտենալ բանկին մինչև որ ներսի տղերքը յաջողեցին դռները գոցել և բանկի տէրը դառնալ:

Ընկաւ Բարեկէնը, բայց անկուսով իսկ ապահովեց բանկի գրաւումը: Նա իր նպատակին հասած էր: Բոսորագոյն արիւնը լճացած էր նրա դիակի շուրջը. նրա յուշարկաւորութեան պսակն էր դա, որ այնչափ խոշոր շրջանակով պատել էր ուսմանը պատառոտած նրա մարմինը: Նա գնաց մեռնելու վճռով— «Գուցէ Բարեկէնի վերջին նամակն ըլլալ» գրում էր նա մի օր առաջ իր բարեկամին: Իսկ որ վերջինն եղաւ: Եւ նա մեռաւ հերոսի մահով:

Օգոստոսի 15-ն է, Բանկի գրաւման յաջորդ օրը: Բանկի մէջ և դռան մօտ ընկած դիակները խիստ հետաքրքրութեան առարկայ դարձան թիւրք ոստիկանութեան համար: Կառավարութիւնն ուզում էր հասկանալ, թէ ինչ մարդիկ են այդ յանդուգն ձեռնարկի իրագործողներ: Զափթիէ նազըր անձամբ հսկում էր կատարուող քննութեան գործին: Միւս դիակները բանկի մէջն էին գտնուած, բնական է, որ գաւազիրներն էին, իսկ Բարկէնինը դուրսն է եղել դռան առաջ: Քննութիւնը պարզեց, որ ուսմբերը պայթել են իր մօտ, հէնց իր ձեռքերում, բայց ինչպէս է եղել, որ դուրսն է մնացել: Գաղտնիքը պարզելու համար, կանչուեցան քաղաքի բոլոր յայտնի լրտեսները: Մի լրտես, որ լաւ գիտէր Բարկէնին, տեսնելուն պէս ճանաչեց և գոչեց՝ ցաւակցաբար «Վայ, խային էրմէնիլէր, շու զաւալլոււի գա էօլդիւրմիւլէր, նէ գարարսըզ չօձուգ իդի»: Լրտեսը կարծում էր թէ Բարկէնը թիւրք է և սպանուած հայ յեղափոխականների ձեռքով: Զափթիէ նազըրը տեսնելով, որ լրտեսը ճանաչում է դիակի տիրոջը և նրան թուրքի տեղ ընդունում, կատարութիւնից գոռաց. «Պորի՛ր աչքիցս. խայինը դո՛ւ ես և քեզ նման զուր ամսական ստացողները, որոնք մարդկանց ճանաչելուց, հետները յարաբերութիւն ունենալուց յետոյ էլ չեն կարողանում տարբերել գեւաւորը թիւրքից: Չեզ պէս լրտեսների շնորհիւ դեռ շատ փորձանքներ կը գան մեր իսլամի գլխին»:

Բարկէնի ով լինելը չը հաստատուեցաւ: Միայն հայ լինելը հաստատ էր և այդ պատճառով միւս դիակների հետ յանձնուեց հայ հոգևորականութեան, որը նրան էլ բոլոր զոհերի հետ թաղեց հասարակաց գերեզմանատանը:

...Մարմարէ կամ բրօնզէ արձանը չը զարդարեց նրա շիրիմը, որի տեղն անգամ անյայտ մնաց: Բայց գաղափարը, որին նա զոհ գնաց հերոսաբար, մնում է անջինջ ընկերների սրտում՝ իբրև մշտական յարգանք նրա յիշատակին և նրա անյայտ գերեզմանին...

Այդ գաղափար—արձանը մշտական հնոցն է ոգևորութեան, աղաղակող կոչ՝ դէպի կուր, դէպի ազատութիւն, դէպի լոյս:

ՅՈՐԿՈՐՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՒՆ

IV

ԽՈՒՄԲԵՐՈՒ ԹԻԻԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ:—Սահմանէն ներս մտնող օժանդակ խուժարու անդամներու թիւը պէտք է ըլլայ 35, 55, 75, 95: Երեսունուհինգը նազագոյն թիւն է, որմէ պակաս պէտք չէ ուղարկել, որովհետև ճանապարհներու վրայ գտնուած թշնամին բաւական ուժեղ է: Եթէ խուժը քիչ թւով ըլլայ—շատ դիրքեր չի կրնար բռնել, իր բռնելիք դիրքերը գատարկ կը մնան՝ որոնք թշնամին կը բռնէ: Եթէ զինւորները իրարմէ հեռու դիրք բռնեն՝ կարող է թշնամին մէջերը մտնել և անջատել. եթէ իրարմէ հեռու ըլլան՝ չեն կրնար յարաբերութիւն պահել մէկ մէկու հետ և իրարու ըրածը չեն հասկնար: Եթէ տաս հոգինոց խուժը մը պիտի ղրկուի՝ աւելի լաւ է երբէք

չի զրկել: Օժանդակ խուժերը պէտք է ճամբայ հանել այն ժամանակ՝ երբ գիշերները երկար են և լուսընկալ:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.—Երբ որեւիցէ վայր մը խուժը պիտի ուղարկուի, Զինւորական Խորհուրդը նախօրոք պէտք է այդ խմբի ռազմավարքը պատրաստէ: Յետոյ նայելով իր մօտն եղած զինւորական ցուցակներուն՝ խմբի համար ընտրէ այնպիսի զինւորներ, որոնք գնալիք ճամբաներուն վրայ գտնուող գիւղերէն կամ քաղաքներէն ըլլան: Երկիր մտնելէն 15-20 օր առաջ՝ պէտք է կանչել այդ զինւորները և ցրել սահմանագլխի այն հայ գիւղերը՝ որոնք անցնելիք ճամբուն վրայ են: Այդ մէկ քանի օրուան ընթացքին մէջ զինւորները միշտ քալելու փորձեր պիտի ընեն: Առհասարակ քալելու անկարող մարդիկ պէտք չէ գտնուին այս կեանքին մէջ, որովհետև անոնք ոչ միայն օգտակար չեն կրնար ըլլալ, այլ իրենց ընկերներուն ալ վնաս կը պատճառեն: Խմբապետը պարտաւոր է այդ մէկ քանի օրուան մէջ մէկ-մէկ կանչել զինւորները և իմանալ անոնց հրացանի վարժութիւնները: Եթէ պակասութիւն կայ՝ անհրաժեշտ է լրացնել:

ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄ.—Իւրաքանչիւր զինւոր պէտք է ունենայ լաւ հրացան մը՝ առանց որեւէ պակասի: Զինւորներ, լաւ ուշադրութիւն դարձուցէք հրացանի պակասութեան վրայ. եթէ անոր որեւիցէ մասը պակաս է կամ վատ՝ չառնէք: Չեր խմբապետէն լաւ հրացան պահանջեցէք. եթէ լաւը չի աւաւ՝ եղածը մի՛ առնէք ու մի՛ երթաք:

Իսկ խմբապետը պարտաւոր է զինւորներուն անթերի, լաւ հրացան տալ: Առանց զինւորներու, դո՛ւն, խմբապետ, ոչ մէկ ուժ չես կազմեր և պէտք է անոնց կեանքը շատ ու շատ բարձր գնահատես: Եթէ հրացանը վատ է, զինւորը ձեռքերը ծալած՝ պիտի նստի կողքիդ. հասա ո՞վ կուրի:

Իւրաքանչիւր զինւոր պէտք է ունենայ տասն հարուածեան ատրճանակ մը լաւ տեսակէն, հրացանի փամփուշտ՝ 300—350 հատ, իսկ ատրճանակի փամփուշտ՝ 100 հատ: Աւելի պէտք չէ տալ, եթէ զինւորները պահանջեն իսկ: Բոլոր փամփուշտները պէտք է մաքրել և մէկ-մէկ փորձել հրացանի մէջ, որ ետքը փորձանք մը չի պատահի:

ԶԿՈՒՇՈՒԹԻՒՆ.—Մինակ Զինւորական Խորհուրդը, խմբապետն ու տասնապետները և վէլէտները պէտք է գիտնան թէ խուժը ո՞ր գծով պիտի սահմանն անցնի: Պէտք է վէլէտներուն խիստ պատուիրել որ, այս կէտը ոչ որի չի յայտնեն, որպէսզի լուրը չի տարածայնուի: Տաճիկ կառավարութեան սահմանափակը գտնուած հիւպատոսները լրտեսներ ունին, որոնք իմանալուն պէս լուր կուտան սահմանապահ տաճիկ զօրքերուն և ասոնք ալ պէտք եղած միջոցները ձեռք կ'առնեն, որ խուժին առաջը կտրեն: Եւ եթէ առաջին գիշերը չի պատահեն իսկ, ցորեկը ձեր հետքերը կը գտնեն և լուր կուտան աւելի ներսը: Եթէ մօտակայ սարն էք ապաստանած կամ գիւղը՝ կարող են գտնել և կամ կուրի ստիպել:

**ՇԱՐԺԻԵԼՈՒ ԿԱՐԳԸ.**—Խուճաբի առջևէն 30 կամ 50 քայլ առաջ պէտք է բալեն վէլէտ մը և երեք ճարպիկ զինւոր: Ասոնց և խմբին միջև պէտք է քալին երկու զինւոր: Այս երկու զինւորին ետևէն քալելու է խմբապետը վէլէտի մը հետ՝ խուճաբի առաջն ընկած: Խմբապետի օգնականն ու տասնապետ մը ուրիշ վէլէտի մը հետ՝ պէտք է կազմեն խուճաբին վերջապահ մասը. ասոնց պարտականութիւնն է քալեցնել զինւորները, չի թողուլ որ անջատուին իրարմէ: Խմբապետը պարտական է որոշ չափով արագ քալեցնել խուճաբը, որպէսզի արշալուսին չի մնան և ճամբորդի չի հանդիպին: Երկու տասնապետ պէտք է երթան խուճաբի կողքերէն: Զինւորներն իրարու հետ պէտք չէ խօսին, ոտքերով ձայն չպէտք է հանեն, առանց հրամանի սիկար չի ծխեն: Զորիով ռազմավթերը միշտ պէտք է երթայ վերջին տասնեակի հետ:

**ԱՌԱՋԻՆ ԴԻՊԻ.**—Եթէ ուէ դէպք պատահի, խմբապետին հետ գտնուած տասնեակը պէտք է կուռի իր վէլէտին հետ: Վերջին տասնեակները կրակելու իրաւունք չունին: Երբ առջևէն գնացող խուճաբը կրակ բացաւ, ետևէն եկողները իրաւունք չունին կրակելու, հակառակ պարագային կարող են ընկերներ սպաննել: Խմբապետի օգնականը՝ բովը գտնուած վէլէտին հետ անցնելու է խուճաբի առաջը և շարունակելու է ճանապարհը: Հեռանալով 100—150 քայլ եթէ քարեր կան՝ դիրք բռնելու է խմբով. իսկ եթէ քար չի կայ, դուրան է, պէտք է զինւորները ցրած պառկեցնել կողքի վրայ: Գիշերայ կռիւներն առ հասարակ երկու-երեք զալպէն աւելի չեն ըլլար: Խմբապետն իր բով եղած տասնեակով նստել կուսելու չէ, այլ առաջութեամբ խոյս տալու է թշնամիէն: Երբ բաւական հեռացաւ՝ սուլելու է որոշեալ սուլոցով, որուն պէտք է պատասխանեն ընկերները: Այնուհետև նորէն կը միանան և առաջայ կազմով կը շարունակեն ճամբան:

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ

**ԹԻՒՐԸ ԱԶԱՏԱԽՈՅՆԵՐՈՒ ԿՈՉԸ**

(Թիւրքերէն ձեռագրէ)

**Օ ս մ ա ն ց ի ն եր,**

«Օսմանցիութիւն» — ներական և յարգելի անուն: Այս անուն տակ մենք կը նկատենք մեր բոլոր հայրենակիցները, թիւրք, արաբ, քիւրդ, ալպանացի, յոյն, հայ, բուլղար և այլ ցեղերէ բաղկացած մեր համաքաղաքացիները՝ իրարու համերաշխութեան և միութեան ձեռք կարկառած: Օսմանցիութեան դրօշակի տակ վեց հարիւր տարի ապրեցանք և դեռևս պիտի ապրինք: Բայց ապրի՛ւ... Սիրելի հայրենակիցներ, ի՞նչպէս ապրեցանք և ի՞նչպէս պիտի ապրինք:

Մարդու համար կեանքի նպատակը՝ ազատութեամբ ապրիլն է: Ազատութեամբ ապրիլն ալ՝ ուրիշ յարձակումէն ապահով, մարդկային հնարաւոր երջանկութիւնը ձեռք անցնելով ապրիլն է: Քանի այս պայտէս է, շատ ցաւալի պիտի լինի մինչև այժմ մեր ինչպէս ապրած լինելը այստեղ պարզել, մանաւանդ վերջին երեսուն տարիներ...

Այս, վերջին երեսուն տարիներ, առանց երջանիկ վայրկեանի մը բացառութեան, դժբախտութեան շարք մը եղած է: Ամբողջ երեսուն տարիներ աւազակներու խուճաբի մը ձեռք գերի, անզօր և ընկճուած ենք: Ո՛ր է ազատութիւն,

ո՛ր է մարդկային հնարաւոր երջանկութիւն: Մեր ներսահան հայրենիքը՝ դարձած է անարգ ու սոսնակիտ:

Կառավարութիւններ, քաղաքակրթւած կառավարութիւններ, որոնք միմիայն ազատութիւնը և մարդկային երջանկութիւնը ապահովելու, խաղաղութիւնը պահպանելու և արդարութիւնը բաշխելու համար հաստատուած և հիմնաւորուած են. չը դիտենք ինչո՞ւ մենք, օսմանցիներ, ներկայի ամենանախնական (պրիմիտիվ), ամենաանգութ բռնաւոր կառավարութեան հարստահարութեան և կեղեքման տակ այսպէս ստրուկ և ընկճուած կը մնանք:

Այս անգութ կառավարութիւնը, միևնոյն հայրենիքի զաւակները, տարբեր... բայց իրարու եղբայր ցեղերը, իրարու ձեռքով կոտորել կուտայ: Եւ չը բաւականացած անոնք իրարու թշնամի դարձնելով, անոնց կեանքն ու երջանկութիւնը վտանգի տակ ձգելով բանտերն և պատարկութիւնը հայրենիքի ամենամոռնէր զաւակներով կը լեցնեն: Բոլոր սարսափելի շարիքները, սնակործան աղէտները մինչև վերջին ծայրը մղելով՝ հայրենիքը դէպի կործանում կը գահաՎիժէ: Հայրը իր զաւակէն, զաւակը իր եղբորմէն. եղբայրը իր քոյրէն վտահ չէ և ոչ մէկը բռնակալութեան անգութ ճիրանէն չէ կարող ազատուիլ: Երկու բարեկամ չեն կրնար գլուխ գլխի տուած խօսակցիլ: Երեք կամ հինգ ընկեր չեն կարող իրարու ձօս հաւաքել: Վաճառականութիւնը, արհեստ, երկրագործութիւն — ընկերական անդարձութեան անհրաժեշտ գործօնները — կաշկանդուած գերեւած են: Ամենուրեք բանտեր, պատարկայրեր, մահեր:

Եւ դեռ մեր կողմէն ոչ մի վրդովմունք, ցաւու ոչ մի ճիշ: Արդեօք ինչո՞ւ: Ա՛հ. ծածկելէ ի՞նչ օգուտ, ապիկարներ ենք, աղէտներ ենք, չենք հասկնար թէ ի՞նչ բտել է ապրիլը՝ չենք գնահատեր, որ կեանքի նպատակը ազատութեամբ ապրիլն է:

Ասկայն այս ապիկարութիւնը, այս տգիտութիւնը չէ կարող այսպէս շարունակել և չը պէտք է շարունակել: Եթէ շարունակէ՝ ստիպւած ենք աւելի դառն, ամենադառն բարկութեան — Օտարի գերութեան — պատրաստուիլ:

Ապա ուրեմն ներկայ ապիկար ու ընկճուած վիճակէն ազատելու համար ի՞նչ ընելու ենք: Ասկէ ազատելու համար ամենաազգու և միակ միջոցն է բռնակալ կառավարութիւնը տապալել և սահմանադրութիւնն ու արդարութիւնը վերականգնել և ապահովել: Բայց անսիրտ կառավարութիւնը այս միջոցին դէմ՝ միշտ արթուն՝ դեռ շատ ուժեղ և միանգամայն անգութ է: Եւ օսմանցիներ ընդարձակ կայսրութեան մէջ ցրած լինելով՝ ընդհանուր շարժում մը առաջ բերել հսկող թշնամիի մը առջև սուայժմ գրեթէ անհնարին է:

Ուրեմն ինչ պէտք է ընել:


Մեզ կը մնայ կաստէժօնիցուց և էրզրումցոց օրինակին հետեւիլ: Գաստէժօնիցիներ իրենց ստոր վալին Էնիսը, որ նաւթի առևտուրի շահագործումն անգամ իր ձեռքը անցուցած էր — վաճառեցին, վախկոտ գօմանտանին չանապին. տէֆտէրտարն և մէքթուպօն արհամարհեցին. հեռադատունը գրաւելով ուղղակի Երլըզլի կեդրոնին պօռացին. իրենց ցաւերն, իրենց կրած զրկանքները ամենաազգու և առնական կերպով յայտնեցին:

Երլըզլի բոլոր շարիքներու աղբիւրը. այն անգութ թագապիւրը, այս աղաղակին, այս հաւաքական և առնական ճիշի առաջ անմիջապէս մարդատէր, ողորմած և զթաւեր դարձաւ: Իսկոյն հեռագրին գլուխը գալով աւետեց, որ Էնիսը պաշտօնանկ բրած է, թէ ժողովրդի վիճակով անձամբ պիտի զբաղէ, թէ անոնց անդարձութիւնն և հանգստութիւնը պիտի ապահովէ:


Յետոյ էրզրումցիք... Գաստէժօնիցիներէն առած դասով բայց աւելի պարզ, աւելի առնական ժէստով իրենց ստոր վալին վաճառեցին. Երլըզլի ասիկա ևս արձակելու ստիպուցաւ: Առնուած վալին, որ դէպի Վ. Պօլիս ճամբայ ընկած մինչև Տրապիզոն հասած էր — Երլըզլի յիմարաբար կարծեց, թէ ժողովրդի վրդովմունքը խաղաղած լինելով հետևաբար կարելի է վաճառուած վալին ետ դարձնել և իր պաշտօնին մէջ վերահաստատել, բան մը, որ ամբողջ շարիքներու մէջ իր մեղսակցութիւնը պարզօրէն պիտի ապացու-

ՅԱՐԱԿԱՆ ՇԱՀԱՏԱԿՈՒ-  
ՇՈՒՇՈՒ ԸՆԴՀԱՐՈՒՄ-

(1905 Օգոստոս)



Ընչու հայոց Թաղի հրդեհը—ընդհանուր պատկերը:




Ընչու հրդեհը—զազանչեցոյ եկեղեցու փողոցը:

# Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Կ Ո Թ Ո Ղ Ը

## Ն Ե Ր Ի Տ Ա Ր Ե Կ Ա Ր Ձ Ի Ն

1906 թ. ս. ս. ս. ս. ս.)



Հուշու հրդեհը—հայոց բազարի շուրջը:



Հուշու հրդեհը—Խանդավերեանի Թատրոնի շէնքը:

ցանկեր: Սակայն ժողովուրդը այս լուրը ստանալուն պէս՝ աւելի ազդու և բուռն բողոքով անգամ մ' ևս էրզրում ոտք չը կրկնելու պայմանով վալին հեռացուց:

Պարզ է որ Գաստէմօնի և Էրզրում բառերը անգուծ սուլթան Համիդի գանկին մէջ հրդեհուած՝ զինք կ'անհանգստացնեն, կ'անզօրացնեն և կ'ընկճեն. բայց երկու վիլայէթի ժողովուրդը այժմ ամեն պարագայի մէջ մի քիչ աւելի հանգիստ բլլալու է, որովհետև մի քիչ աւելի ազատ է և հեռագհետե աւելի հանգիստ, աւելի երջանիկ բլլալու վերապահուած: Ամենամեծ վալի մը անգամ պէտք է լրջօրէն մտածէ այս տեսակ ժողովրդի մէջ նոր ստորութիւն մը գործելու համար. պէտք է գողայ և կթէ համարձակ՝ շատ բնական է որ իր արժանի պատիժը շուտով գտնայ: Ըսել է որ՝ այսօր Գաստէմօնիի և Էրզրումի մէջ ժողովուրդը թէև մասամբ՝ բայց և այնպէս ազդող է, իսկ կառավարութիւնը ենթակայ, ազգաբնակչութիւնը տէր, իսկ կառավարութիւնը հնազանդող:

Կեցցե՛ն Գաստէմօնիցիներ,

Կեցցե՛ն Էրզրումցիներ:

Այս երկու վայրերու՝ իրենց իրաւունքներու պաշտպանութեանը համար բռնած ընթացքը, որևէ քաղաքական նպատակէն զուրկ, բայց իրենց շահերու վրայ հիմնուած յաղթանակ մըն է՝ բռնակալ կառավարութեան դէմ: Ինչ որ ալ լինի, դէպի նպատակը տանող ամեն մի միջոցը մենք օրինակուր և յարգելի կը գտնենք: Այս միջոցները՝ որչափ ալ անձնական շահէ ծագում առած լինին, սակայն նկատելով որ շահի գիտակցութիւնն ալ յառաջադիմութիւն և մարդկային պարտականութիւն մըն է, մենք սրտանց կը ցանկանայինք այս յառաջադիմութիւնը, այս գիտակցութիւնը տեսնել բոլոր նահանգներու, գիւղերու և համայնքներու մէջ:

Այսօր կը գոչենք կեցցե՛ն Գաստէմօնիցիներ, կեցցե՛ն Էրզրումցիներ: Մենք կ'ուզենք այսօր կամ վաղը սոյնպէս ցնծութեամբ աղաղակել կեցցե՛ն զօնիացիներ, պաղտատոցիներ, կեցցե՛ն իզմիրցիներ, սերանիցիներ, պուրասպիներ, կեցցե՛ն խարբուլթիցիներ, ախարպէքիցիներ, կեցցե՛ն Պօլսեցիներ և վերջապէս կեցցե՛ն բոլոր օսմանցիներ:

ԱԶԱՏԱՌՈՒ ԹԻԻՐԻՔԵՐՈՒ ԳՈՐԾՕՆ ԿՕՄԻՏԵ

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

#### ՔԱՆՏԱՅԻՆ ՑԱՆՁԱՆՔՆԵՐ

Վան, Յուլիսի 2

Համարեա ողջ քաղաքը սուգի մէջ է: Բոլորը իրար ակնանջին խորհրդաւոր կերպով փսփսում են, բոլորի դէմքերն էլ մուսյլ են ու տխուր.—բանտում բարբարոս ոճրագործութիւններ են տեղի ունեցել:

Վանի բա՛նտ—գա մի հսկայ կրակարան է, որի մէջ խորովում են հարիւրաւոր անմեղ երիտասարդներ, մի սոսկալի Գեհեն, ուր լուռ ու մունջ այրում են բազմաթիւ գատապարուածներ, հրէշ մարգագայլերի սարքած մի որջ, ուր մարդկային արիւնը ծծում, միան էլ պլոկում ու կրծոտում են անխնայ:

Տաճիկ կառավարութեան հաւատարիմ պաշտօնեաների մէջ շատ են այնպիսիները, որոնց գազանային ուղեղը միայն ու միայն նորանոր ոճիրներ ստեղծելու մասին է մտածում: Այդպիսիներից են թաբուռ աղասի Հիւսնին և նրա աջ բազուկը՝ բանտի միւտիրը, մէկը միւսից վարպէտ ու գերազանցող իրենց հրեշային ձեռնարկների մէջ: Երկար ժամանակից ի վեր նրանք թուրքաւոր ատելութեամբ լեցուած էին հայ բանտարկեալ-

ների մանաւանդ միքանի աչքի ընկնողների դէմ. երկար ժամանակ է, ինչ ուզում էին մի հարւածով վերջ տալ բոլորին, բայց ամեն անգամ մի արգելափակ պատճառ լինում էր. սրանից բաց օր առաջ էր, որ Կիսեցիներ խստութիւններ առանց ուէ պատճառի և 15 հոգի ձգեցին «փօլիս»<sup>4</sup>. Վարդգէսի ձեռներն ու ոտները շղթայեցին, ուզեցին թունաւորել, մի քանի օր բոլորովին քաղցած պահեցին, բայց չը յաջողեցան: Ութ օր առաջ էր, որ մտադրուեցան աքսորել նոյն Վարդգէսին, ճանապարհին ոչնչացնելու նպատակով,—դարձեալ չը յաջողեցան. և վերջ ի վերջոյ սարքեցին ինկվիզիտօրներին արժանի խայտառակ մի ձեռնարկ: Թէ ինչպէս—մանրամասները անյայտ են. միայն այն է յայտնի, որ երէկ գիշեր, բանտի հինգերորդ կօվուշում երբ բոլորը բռնած էին, յանկարծ հրդեհ է ծագում: Ծուխը խեղդում է բոլորին. հինգերորդ կօվուշի բանտարկեալները իրար են անցնում. նամեծանում է և տարածում ամբողջ բանտի մէջ: Միւս սենեակներիցն էլ բանտարկեալները ուզում են դուրս գալ, բայց ոստիկանների զնդակներն են պատասխանում նրանց դուռն վրայից. պահակախումբը նշան է տալիս. զինւորները շտապում են. իրար ետեէն հասնող զօրքը շրջապատում է բանտը: Ներսը խուճապը ահագին է. հինգերորդ կօվուշը ծխից խեղդուում, դուռը բռնուած է և ոչ ոք չի կարողանում դուրս գալ: Մեծ մասը, գուցէ և բոլորը կըխեղդուէին, եթէ էրքեանի հարպի (սպայակոյտ) գլխաւորը չհրամայէր տանիքը քանդել: Քանզում են տանիքը զօրքի ձեռքով և ծխից ազատում մէջի եղածները: Զաբթիաները շարունակում են բաժանմունքների պատերի բանդումը, ցոյց տալու համար, թէ բոլոր կօվուշները միացած ուզեցել են փախչել. և ապա զօրք ու զաբթիաները յարձակում են բանտարկեալների վրայ և սկսում է ծեծ ու խողխողում: Հրացանների սլինները շողշողում են դեռ չհանգած տախտակների լոյսի առջև: Մէկի կողմն է ծակում, միւսի դէմքն է կտրուում. երրորդի ոտն է կտրուում և մէկը միւսի ետեւից յատակի վրայ են գլորում: Բոպէսպէս որպէս թէ խաղաղում է ամեն ինչ...

Բայց այդ դեռ սկիզբն է: Գունները ամուր կողպած են բոլոր բաժանմունքներում: Այդբան քաջագործութիւնները զօրքերն ու զաբթիաներն էին կատարել, դեռ մեծերի շահատակութիւնները մնում էին: Եւ ահա հրամանը տրւում է: Բոլոր կօվուշներից մէկիկ մէկիկ դուրս են հանում քիչ ու շատ յայտնի հայ քաղաքական յանցաւորներին և իւրաքանչիւրն առանձին առանձին բակի մէջ ծեծելով կիսամեռ ձգում են «փօլիսում»<sup>4</sup>. մի խուց, մութ ու խոնաւ, ուր մի մարդ կարող է շարժել, եթեմութ հոգի ուշաթափ, վիրաւոր ու արնթաթախ իրար վրայ լցնում այս տօթ ու շոք օրերին, պարզապէս խեղդելու գիտաւորութեամբ: Այժմ 50-60 հոգի այդպէս լեցւած են «փօլիս» կոչւած դժոխքում:

Բայց Հիւսնի, այդ գազանը, դեռ նոր բան է ուզում. նրա հրէշային ախորժակը հետզհետե աւելի է գրգռում, հանգիստ մնալ չի կարողանում. գիշերը տուն չեր գնացել, մնացել էր բանտը՝ իր գազանային կրքերին բաւականութիւն տալու համար: Գատաղած, որպէս թունաւոր օձ, հրամայում է զաբթիային հանել

փոխից գեամուր Աարգգէսին՝ և իր առաջ բերել: 25<sup>օ</sup> որ նա բռնելու օրը՝ վիրաւորել էր իր օտը վրէժի ժամը հասել է: հոգ չէ, թէ նա էր պատճառ դարձել, որ հասարակ փոխի շիւսին բարձրանայ թարու աղայութեան պաշտօնին: Կիսամեռ Աարգգէսը շապիկով փոխից դուրս է հանում և ձգում Հիւսնիի առաջ: Սա՛ աւելի կատաղած՝ ի տես իր որսին, քաշում է սուրը և մի քանի հարած իջեցնում նրա կողերին ու գլխին, ապա ոտից մինչև գլուխ մերկացրած, պառկեցնում է կոշտ սալալատակի վրայ, և կամչիով այնքան զարնում իր ձեռքով, մինչև որ բանտարկեալը դադարում է անքալուց, կծկումներ անելուց և դառնում կատարեալ դիակ,—նոր ետ է քաշում: Լուր կայ որ մեռածներ կան և շատերն էլ հոգեվարքի մէջ են: Սպանւածներից մէկը Մկրտիչ անունով, սևիտով ծակած է եղբի: Ոչ մի բժշկական օգնութիւն չի կարելի հասցնել, միայն կառավարական բժիշկներն են այցելում բանտ, որոնք նոյնիսկ դիտմամբ սպանում են անմեղներն: Նոյն այդ բժիշկներից մէկը ասել էր՝ թէ «մեռած Մկրտիչի կողը սևին հարած չէ, այլ ինքն է ծակել, որպէսզի հրդեհի մուխը դուրս գայ և ազատւի...» 2 ճեն ընդունում ոչ մի այցելու թող չը տւին որ մայրերը տեսնեն իրենց որդիներին: Կառավարութիւնը աշխատում է ամեն կերպ ծածկել իրողութիւնը: Սպանւածների դիակները դիտմամբ միասին դուրս չեն հանում: Հայ ժողովրդի վրդովմունքը ծայրայեղ է, բոլորը սպասում են ունէ կերպով վրէժխնդրութեան: Հիւպատոսները անտարբեր են. ոչ մի միջամտութիւն, գոնէ վիրաւորեալների վիճակը բարելաւելու նպատակով: Այսպէս, այնինչ խաւար նկուղներում բազմաթիւ վիրաւորներ հոգեվարքի մէջ են, հիւպատոսները կուսակալի հետ խնջոյքներ են կազմում ֆրանսական հիւպատոսի տանը ու հանրապետութեան տարեդարձն են տօնում... Մինչ մի փոքր ջանք, մի փոքր բարեացակամութիւն շատ բան կարող էր փոխել: Սպասողական վիճակի մէջ ենք, չը գիտենք ինչ է լինելու այդ կենդանի-մեռածների վերջը:

Կառավարութիւնը ուզում է մեղքը ձգել դարձեալ հայերի վրայ, որպէս թէ նրանք ուղեցել են հրդեհ ձգել, խուճապ առաջացնել և փախչել բայց հրդեհը մի կօվուշի մէջ էր—միւսները ինչ էին արել: հրդեհը հինգերորդում էր, մինչ Աարգգէսը երրորդ կօվուշում բնել էր: Կառավարական պաշտօնեաների դաւերին ո՞վ չէ ծանօթ:

**Մ Ո Ւ Շ, 4 յուլիս**

Խուզարկութեան մի նոր ձև էլ ստեղծեց մեր թըշուառ վաթանի համար: Սարհատին գտնելու պատրուակով, զինւորները ահագին թւով լեցում են հայկական գիւղերը, և պահանջում նրան. մինչդեռ նա այդ տեղերում բոլորովին չէ եղել և կամ եթէ եղել է՝ այդ էլ ամիսներ առաջ: Մաս-մաս գիւղերում մնալուց և նրանց անտեսապէս և բարոյապէս կատարեալ քայքայելուց յետոյ, խուզարկուները՝ երբ իրենց գազանական կրքերին բաւարարութիւն տրած է լինում, այրում են գիւղը և ապա հեռանում, վաղը մի ուրիշ տեղ նոյնը կրկնելու պայմանով...

**ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ**

**ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ**

ՇՈՒՇՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Թիֆլիս, յուլիսի 16

Տասն ամուսն աննշան խաղաղութիւնից յետոյ ընդհարումները վերսկսեցին Շուշու մէջ: Հրացանաձգութիւնը շարունակում է. թուրքաց մասը այրում է. սպանւած են երկու հայ, վիրաւորւած մի քանի հոգի: Թուրքերի կորուստը մեծ է: Ասկերանի հինգ հայկական զիւղեր շրջապատւած են թուրքերով: Հայերը գրաւել են Ասկերանը: Կուրը շարունակում է: Օգնութեան է ուղարկւած մի հարիւրեակ կօզակ: Երեկ քրդերը յարձակեցին Այրալիշէնի և Կրկտանի վրայ, աշխատելով ձեղքել—անցնել Շուշու: Գօրջապօվը գնդակոծեց նրանց:

Շուշու յուլիսի 17

Յուլիսի 15-ի գիշերը թուրքերն սկսեցին ամրացնել իրենց դիրքերը և գնդակոծել հայերի դիրքերը: Հայերը ստիպւած եղան պատասխանել: Առաւօտեան 7 ժամին՝ հայերը ոչնչացրին թուրքական մի նշանաւոր դիրք—Գիկտան-կուրուի տունը. այդ դիրքերի վերացման վրայ հայերը պնդել էին խաղաղութեան կնքման ժամանակ: Ժամը 3-ին երկու կողմի պատգամաւորները հաւաքեցին խորհրդակցութեան՝ անմիտ զօտութիւնների առաջն առնելու համար: Գիկտան-կուրուի թուրքական դիրքերում գտնւած են 30-ի շափ դիակներ. թուրք վիրաւորների թիւը յայտնի չէ—թուրքերը մի քանի անգամ յարձակեցին Ասկերանի՝ Խանաբազ, Խրամուրզ և Քարազլուխ գիւղերի վրայ, բայց միշտ էլ յետ մղեցին: Այսօր հանգիստ է: Բանակցութիւնները շարունակւում են: Թուրքերը փչացրին հեռագրաթերը. պօստը չէ վստահանում գնալ Աղդամի ճանապարհով: Հայ ինքնապաշտպանութեան խմբից սպանւել են 12 հոգի, սրոնց թւում ինքնապաշտպանութեան եռանդուն ղեկավարներից մէկը՝ Արտէմ Տէր-Մարտիրոսեան: Վիրաւոր հայերի թիւը մինչև այժմ հասնում է 45-ի: Այրւած են մտ 200 թուրքական տներ: Թուրքերը օգնութիւն են ինդրել Աղդամից և Ասրաբաղից:

Շուշու, յուլիսի 23

Գերբեկի գնդի սպայ Չերեքովսկին յուլիսի 20-ին ինդրեց Գօրջապօվին հեռացնել հայ ֆէդայիներին: Աղա-իրզայի այրւած տնից և այնտեղ դնել թուրք կուռղներին: Գեներալը թող տեց, կարծելով որ այդ հրաշալի դիրքը թուրքերին հարկաւոր է ինքնապաշտպանութեան համար: Յուլիսի 21-ին, երեկոյան ժամը 7-ին, երբ Աղաիրզի դիմացի հայկական դիրքերից շատ անգէն մարդիկ խաղաղութեամբ բանակցում էին թուրքերի հետ, դիրքերի մէջտեղ, Աղաիրզի տան առաջ կանգնած էր գեներալի ազիւտանտը 8 զինւորով, թուրքերը մի ազդանշանով միանալով կրակ բաց արին. սպանւած է մէկ զինւոր, վիրաւորւած են երկու զինւոր և մի քանի հայեր: Հայերը դիրք բռնեցին. սկսեց հրացանաձգութիւն, որ շարունակեց ամբողջ գիշեր: 22-ին հայերը յետ մղեցին թուրքերի կատաղի գրոհը, երկրորդ անգամ բռնեցին Աղաիրզի դիրքը, որտեղ գտան մի քանի փութ նաւթ՝ ածւած կարասների մէջ՝ նաւթի մէջ թաթախած շատ փալատներ, տաշեղներ, նշանակւած հայերի համար: Թուրքերն ունեցան բազմաթիւ սպանւածներ. հայերից վիրաւորւած են 15-ը: Երեկ Գօրջապօվը և հայերը հաւաքելով սահմանի վրայ, թուրքերին հրաւիրեցին հատութիւն կայացնելու: Թուրքերը մերժեցին, պատճառաբանելով նրանով, որ հայերը շարունակում են հրացանաձգութիւնը: Այսօր Գօրջապօվը, հոգևորականութիւնը և բազմաթիւ ժողովուրդ, զօրքերով, երաժշտութեամբ հանգիստւոր թափորով անցան թուրքական և հայկական թաղերով: Թուրքերը Շեկինսկու դիրքը յանձնեցին գեներալին:

Շուշի, յուլիսի 23

Յուլիսի 19-ին երկու հարևարի շափ գինեւած քրդեր անցան Խալֆարու վրայով Շուշի Ասկերանը դեռ ևս հայերի ձեռքն էր Ղաջարի թուրքերը, թույլ մտ 300, յարձակեցին Շիխկեր հայ գիւղի վրայ, բայց յետ մղեցին: Նոյնպիսի յարձակում եղել է նաև Սոս գիւղի վրայ, սակայն հետևանքները նոյնն են եղել: Ազգամի թուրքերը յարձակել են Նախիջևանի գիւղի վրայ: Հայերը ստիպել են նրանց փախչել և քշել հասցրել են Ազգամի մտ գտնուող Շէլլու թուրքական գիւղը: Շէլլուցիները թողել են իրենց գիւղը:

Թիֆլիս, յուլիսի 25

Մանրամասնութիւններ Շուշում տեղի ունեցած դէպքերի մասին: Երբ թուրքերը կողակներին զիմազորութիւն ցոյց տւին և 2 զինուոր սպանեցին՝ սկսեց թուրքական մասի ուժակոծումը: Երկրորդ օրը այնտեղ չ'ըզեհ սկսեց. այրեցին 3 թաղ, պարսիկ պրինցի տնից մինչև այն ձորակը, որը բաժանում է քաղաքի վերևի մասը գաւառական վարչութիւնից և ուսաց եկեղեցուց: Այդ մասում այրւել են պարսիկ պրինցիների տները, Ջաֆար-բեգ և Բասուլի-բեգ Աբդրոմիների հոյակապ տունը և ուրիշ մեծ տներ: Քաղաքի միջում, Ազուլեաց եկեղեցուց ներքև այրեց Մամանուի թաղը մինչև Շէլթան-բազար: Այրւած է և Թաղա մահալ թաղը: Ռաբակոծութիւնը և անընդհատ հրացանաձգութիւնը սարսափելի տպաւորութիւն էին թողնում:

Թիֆլիս, յուլիսի 26

Ալադիկաւազում բնակող շուշեցի թուրքերը ուղարկել են Փոխարքային հետևեալ բնորոշ հեռագիրը. «Շուշուց՝ մուսուլմանների մասին ստացւած լուրերը մեզ՝ անպատմելի վիշտ պատճառեցին: Երևում է, որ գեներալ Գոլոշչակովը իր կողակները հայ խմբերին միացնելով, մեր մայրերին, քյորերին, հայրերին ու եղբայրներին թնդանութի ու հրացանի է բռնել Փոխարքայ, սրանից քիչ ժամանակ առաջ, երբ յեղափոխութեան հեղեղը Ռուսիային իր հոսանքի առաջն էր գցել, եթէ մեր մուսուլմանների հաւատարմութիւնը ու շոյող անկեղծութիւնը չը լինէր, հիմա կովկասը ընդհարումների ու յեղափոխութեան կրակով հրդեհւել էր: Բայց մենք մեր այդ հաւատարմութեան ու անկեղծութեան մէջ հաստատ մնալով, պահպանեցինք կովկասը: Ափսոս, արհաւիր. այժմ այդ նոյն զօրքերը, նոյն կառավարութիւնը, իրենց այդչափ հաւատարմութիւնը ցոյց տուող նոյն մուսուլմաններին դէմ ուղղեցին իրենց թնդանութիւնը: Արդեօք մեզ համար կը լինէր սրանից դառն ու արհամարական մի վարձատրութիւն»:

Շուշի, յուլիսի 27

Չանգեղուրի գաւառապետը հեռագրում է Գոլոշչակովին յուլիսի 22-ից. «Գիշերը անցրի գիւղի հետ միասին դիրքերի վրայ, կատարեալ ուղղակի պատրաստութեամբ: Գիշերը տեղեկատու պահակների վրայ թուրքերը համալարկներ արձակեցին: Ցեղեկատու պահակները յետ նահանջեցին, թուրքերը նորից բռնեցին իրենց դիրքերը: Կանոնաւոր կռիւը շարունակուում էր մինչև ցերեկայ ժամը 3-ը: Թուրքերը մեծ աջողութեամբ օգտուում են իրենց դիրքերի յարմարութիւններից: Նրանց կորուստները յայտնի չեն. մենք կորուստներ չունենք: Ամեն անգամ, երբ մեր դիրքերից որևէ մէկը դուրս է հանում գլուխը, թուրքերի կողմից տեղում է գնդակների տարափ: Խիստ հրացանաձգութիւնից յետոյ, թուրքերը բարձրացրել են սպիտակ դրօշակապա պահանջեցին, որ ես գնամ նրանց մտ առանց կողակների, միմիայն երկու ստրաժնիկների ուղեկցութեամբ: «Խնդրում ենք գաւառապետին, գալ մեզ մտ, միայն առանց կողակների, Մենք ժողովել ենք ոչ զօրքերի կամ իշխանութեան դէմ, այլ միայն պաշտպանելու համար մեր ազգը. եթէ հանգստացնէք հայերին, մենք կը գանք ձեզ մօտ»: Ստանալով տեղեկութիւն, որ գիշերը պատրաստուում է յարձակումը զօրախմբի վրայ, օգտուելով մթնից, զօրախումբը տեղափոխեց մտակայ դիրքը: Բոլոր քաջատեղիները բռնւած են գինեւած թուրքերի խմբերով, օգնութեան են սպասում Արաբսի կողմերից»:

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

III

ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏԻՍՄ

Ռուսաստանում գոյութիւն ունեն սօցիալիստական երկու կուսակցութիւններ. դրանցից մէկի՝ սօցիալիստ-յեղափոխականների մասին մենք արդէն խօսեցինք: Այժմ գանք սօցիալ-դեմոկրատներին:

Հասերի համար անհասկանալի է, թէ ինչու Ռուսաստանում գոյութիւն ունեն սօցիալիստական երկու կուսակցութիւններ. աւելի ևս մեծ զարհուրանք է պատճառում այն կծու յիշամուլութիւնը, որ մինչև այսօր էլ երևում է սօցիալ-դեմոկրատների և սօցիալ-յեղափոխականների միջև:

Եւ, ըստ երևուելի ին, ի՞նչպէս չը զարմանալ այդ-յամենայն դէպս, ցաւալի երևոյթի առիթով. ցաւալի՝ այն պատճառով, որ մանաւանդ այժմ անհրաժեշտ է միացումը ոչ միայն խիստ-յեղափոխական, այլ և բոլոր դիւադիր ոյժերի՝ կուսակցութեան ընդհանուր թշնամու, ուսական ինքնակառավարութեան դէմ: Ի՞նչպէս չը զարմանալ, երբ կարծես ամեն ինչ արամադրւում է ուս սօցիալ-դեմոկրատներին և սօցիալիստ-յեղափոխականներին դէպի շահերի համերաշխութիւն և ոչ հակադրութիւն:

Եւ իրօք: 26-ը որ այդ երկու կուսակցութիւնների վերջնական նպատակը միևնոյնն է—վերակազմել ժամանակակից հասարակութիւնը սօցիալիստական հիմքերի վրայ, այսինքն՝ ոչնչացնել մասնաւոր սեփականութիւնն արտադրութեան գործիքների և միջոցների վերաբերմամբ, ոչնչացնել դասակարգային տիրապետութիւնը և համայնացնել ամբողջ ժողովրդի տնտեսական կեանքը: Բայի դրանից, մեր սօցիալ-դեմոկրատների քաղաքական ծրագիրը և քաղաքացիական պահանջներն այնքան նման են սօցիալիստ-յեղափոխականների քաղաքական և քաղաքացիական իդէալներին, որ մենք դրա վրայ կանգ չենք առնի, որովհետև դա կը նշանակէ համարեա ամբողջապէս կրկնել այն ամենը, ինչ որ այդ առիթով ասւած է մեր երկրորդ յօդւածում\*:

Աերջապէս, սօցիալ-դեմոկրատների մշակած ծրագիրը՝ քաղաքային պրօլետարների կեանքի պայմանների վերակազմութեան վերաբերմամբ—ի հարկէ կապիտալիստական կարգերի սահմաններում—ըստ էութեան և նոյնիսկ շատ մանրամասնութիւններով դարձեալ չէ տարբերւում այն միջոցներից, որ յանձնարարում են սօցիալիստ-յեղափոխականները՝ բարելաւելու համար գործարանների, հանքերի և արհեստանոցների բանւորների վիճակը. այնպէս որ այդ խնդրի մասին էլ՝ երկար խօսելը պատեղ աւելորդ ենք համարում: Ուրեմն բանն ինչո՞ւմն է: Ի՞նչ հիմք ունեն ուսական սօցիալիստների երկու ֆրակցիաների տարածայնութիւնները, որոնք երբեմն հասնում են անհամբերութեան, նոյնիսկ մի տեսակ անմիտ, կատաղի թշնամութեան: Ո՞րն է նրանց բաժանող պատճառը:

Նա թաղւած է խորը, նա գտնուում է երկու կուսակցութիւնների կողմնակիցների մտածողութեան եղանակների, նրանց փիլիսոփայական հայեացքների մէջ՝ պատմական պրօցեսի էութեան և նրա գործօնների վերաբերմամբ, ինչպէս և պատմական ստեղծագործութեան գործում անհատների և զաղափարների ունեցած դերի մասին: Պատմութեան փիլիսոփայութեան այդ հիմնական սկզբունքները տարբեր ձևով հասկանալու հետ կապւած են՝ այն տարածայնութիւնները, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանի ներկայ պատմական բուրգի և մեզանում գործող հասարակական ոյժերի—օրինակ՝ ինտելիգենցիայի և գիւղացիութեան—տարբեր գնահատութեան վերաբերմամբ. իսկ դրա-

\* Տես „Ռոսսիա“, № 5 1906.

նից արդէն բոլորովն են ծրագրային և տակաւ քական զանազան դիտումներ, օրինակ՝ ինչպէս վերաբերել զէպի հողային հարցը և տերրորը Ռուսաստանում:

Մի փոքրիկ յօդուածում սօցիալ-դեմոկրատական հասցեներին ամբողջութիւնը ներկայացնել, իհարկէ, անհնարին է: Բայց և այնպէս մենք կաշխատենք առաջ բերել Մարքսի գիտելիքները հիմնական սկզբունքները, — ասում ենք «Մարքսիզմ», որովհետեւ բոլոր սօցիալ-դեմոկրատներին համար, ինչ ազգութեան էլ նրանք պատկանէին, սուսցիզ և մարգարէ հանդիսանում է կարգ Մարքս: Պիտի նկատենք սակայն հետեւեալը: Մինչդեռ ուրիշ երկրների, օրինակ՝ Գերմանիայի, սօցիալ-դեմոկրատները իրենց մի քանի էական հասցեակետերում խիստ առաջ են դնացել, և ուստի ան սօցիալ-դեմոկրատական մասնաւոր, մեր սօցիալ-դեմոկրատիայի հասարակ զինուորները, դեռ էլի կրկնում են Մարքսիզմի հնացած բանաձևերը, յաճախ բացատրելով նրանց ձևով ու ծառ, շատ պարզաբար և համարձակաբար «ձևային» միայն ու միայն ցանկութիւնից զրկւած, — լինել «ամենախիստ մարքսիստներ»: Այդ սեղից է դուրս գալիս այն, որ ռուս սօցիալ-դեմոկրատը միշտ և ամեն ժամանակ հանդիսանում է «plus marxiste que Marx lui-même»:

Ահա թէ ինչու մենք կարեւոր ենք համարում ամենից առաջ մասնանիշ անել Մարքսի սկզբունքների, մէկը, որ մի առանձին ամբողջութեամբ բուն է զրել մեր սոցիալական սօցիալ-դեմոկրատների զլխում:

Դեռ 1859 թւին Մարքս իր «Քաղաքատնտեսութեան քննադատութիւնը» գրւածքի մէջ հետեւեալ կերպով է ձեւակերպել իր պատմա-փիլիսոփայական շրջանը.

«Նիւթական կեանքի (էկոնոմիկա) արտադրութեան եղանակը պայմանաւորում է նրա հասարակական, քաղաքական և հոգեկան կազմը: Մարդկանց գիտակցութիւնը չէ՛ որ որոշում է նրանց կեցողութիւնը, այլ նրանց հասարակական կեցողութիւնն է, որ որոշում է նրանց գիտակցութիւնը»:

Այդ միտքը սովորաբար հասկացւում է այնպէս — կուլտուրական պատմութիւնը, այսինքն՝ որեւէ երկրի քաղաքական կազմը, իրաւական կարգերը, հասարակական և բնականական յարաբերութիւնները, գրական և գեղարվեստական ճաշակը, գիտական, փիլիսոփայական, բարոյական և կրօնական հայեացքները պայմանաւորում են նոյն երկրի անտեսական կեանքով, — բնական անտեսութեան ժամանակ այդ ամենը կրում է մի գոյն. դրամական կամ կապիտալիստական անտեսութեան ժամանակ՝ դրանք կրում են մի այլ գոյն. իսկ սօցիալիստական անտեսութեան պահանջն՝ նրանք կուենան տարբեր գոյն, համապատասխան անտեսական կեանքի այդ ձևին: Ուրիշ խօսքով՝ — պատմութիւնը շարժող ոյժը համարւում է անտեսութիւնը (էկոնոմիկան). նա կազմում է, այսպէս ասած, այն հիմունքը, որի վրայ կառուցւում է ժողովրդի հասարակական-քաղաքական ամբողջ շէնքը: Դա զեռ քիչ է. նոյնիսկ այդ ժողովրդի մաքր ու խղճի ամբողջ աշխատանքը — գրականութիւն, գեղարվեստ, գիտութիւն, բարոյականութիւն, կրօն — ուղղակի և լիակատար կախումն ունի նրա անտեսութիւնից, որովհետեւ, — կրկնենք Մարքսի խօսքերը, — մարդկանց գիտակցութիւնը չէ որ որոշում է նրանց կեցողութիւնը, այլ նրանց հասարակական կեցողութիւնն է, որ որոշում է նրանց գիտակցութիւնը»:

Ի՞նչպէս, կը հարցնէք դուք. մի՞թէ ժողովրդի քաղաքական կեանքի մէջ առաջացող փոփոխութիւնները չեն ազդում նրա անտեսական կեանքի վրայ: Մի՞թէ հանրապետական կառավարութեան օրով հնարաւոր են միևնույն պակասութիւնները ժողովրդական անտեսութեան կազմի մէջ, ինչ որ միահեծան ինքնակալութեան օրով: Մի՞թէ մարդկանց միջև իրաւական յարաբերութիւնները փոփոխելով, փոփոխութեան չեն ենթարկւում, — գուցէ որոշ չափով — նաև նրանց անտեսական յարաբերութիւնները: Մի՞թէ գիտութիւնը, բարոյականութիւնը և կրօնը — մեծ գիտնականների, բարոյագէտների և կրօնական վերանորոգիչների մաքրերը — չեն ազդում այս կամ այն եղանակով, ուղղակի կամ անուղղակի ձևով, ժողովուրդների անտեսական գոր-

ծունեութեան բնոյթի և ուղղութեան վրայ: Մի՞թէ մարդիկ — չէ՞ որ պատմութիւնը ինքն իրեն չէ առաջ գալիս, այլ նրան ստեղծում են մարդիկ, — իրենց գործողութեան մէջ ամենից առաջ և աւելի զեկազարւում են անտեսական շահերով:

«Այո՛, այդ բոլոր «վերնաշէնքեր» են անտեսական «հիմունքի» վրայ և այդ պատճառով պատմութեան մէջ չեն խաղում ինքնուրոյն, ստեղծագործող դեր, «պատմականութեան» մեր սոցիալական — սօցիալ դեմոկրատները, թէև համաշխարհային սօցիալ-դեմոկրատիայի միւս ուսուցիչը՝ Ֆրէդրիխ Էնգէլս, վերջում գրւած հարցերի առիթով հետեւեալ ուշադրու խոստովանութիւնն է անում.

«Եթէ մեր հետևորդները, — ասում է նա վերջերս հրատարակւած իր նամակներից մէկում, — անտեսական կողմին երբեմն աւելի նշանակութիւն են վերագրում քան հարկաւոր է, դրան ուսում մասնաւոր Մարքսն ու էս են մենք մեզ աւելուր: Մեր հակառակորդների վերաբերմամբ մեր սոցիալական էինք ընդգծել այն հիմնական սկզբունքը, որ նրանք ժխտում էին. բայց ժամանակը, տեղը և հասարակական քննարկման ժամանակը թողնում էին տալիս հարկաւոր չափով ուշադրութիւնն նւիրել փոխազդեցութեանը մասնակցող մասնաւոր մասնակցների»:

«Աւելի արտասուցաբար» նրան մասնակցողների ուղեղներում՝ իբրև քաղաքական իրաւաբանական և փիլիսոփայական տեսութիւններ, կրօնական հայեացքներ, որ զարգանում գտնւում են դաւանական սիստեմներ, — այդ բոլոր մասնակցողները, ասում է Էնգէլս մի այլ նամակում, իրենց հերթին նոյնպէս ազդում են պատմական կառուցման թաղանթի վրայ և շատ զեպքերում գլխաւորապէս դրանք են որոշում նրա ձևը: Այդ բոլոր գործունեների փոխազդեցութեան անհրաժեշտ արդիւնքը հանդիսանում է... անտեսական շարժումը...»

Սակայն չը նայելով այդ բոլոր լրացումներին, Էնգէլսը և նրա հետ միասին ամբողջ սօցիալ-դեմոկրատիան, շարունակում են պնդել, որ պատմութեան մէջ որոշիչ գործօնը, վերջի վերջոյ, հանդիսանում է էկոնոմիկան: Ահա հենց այդ հայեցակէտը, մանաւանդ որոշ չափով պարզացրած և ազաւարած մեր գերմարքսիստների կողմից, չեն բաժանում սօցիալիստ յեղափոխականները, որովհետեւ նրանք ընդունում են պատմութեան պրօցեսի բազմակողմանիութիւնը և պատմական գործօնների բազմազանութիւնը, որոնց թիւում ոչ աննշան և լի ապէս ստեղծագործող ինքնուրոյն դեր են յատկացնում գաղափարներին և նրանց կրօններին, «քննադատօրէն խորհրդանշան ձեւերին»:

Գրանից է ահա առաջանում մեր սօցիալիստական երկու բաժանումների առաջին էական տարաձայնութիւնը: Կայ և մի ուրիշը, կրկին տեսական և ոչ նազ կարեւոր:

Սօցիալիզմի մի կարելի է հասնել միայն նրա «հասարակութեան» միջոցով, — կապիտալիզմի միջոցով, — այդպէս է ատում սօցիալ-դեմոկրատական աւետարանի պատերազաններից մէկը: Այդ պատերազանը ուղիղ 58 տարեկան է: Առաջին անգամ նա արտայայտեց Մարքս-Էնգէլսի «Կոմունիստական մանիֆէստում»: Չը նայելով որ այդ տարիների ընթացքում նա ենթարկեց բազմաթիւ դաժան փորձութիւնների, չը նայելով որ նրա փիլիսոփայական նախահիմքերը լիակատար «ֆիսակի» կրեցին՝ զարնւելով կենդանի իրականութեան հետ, ժամանակակից սօցիալ-դեմոկրատիան զեռ շարունակում է կրկնել այլ և այլ կերպերով նոյն բանը, ձևափոխելով և յարմարեցնելով «Կոմունիստական մանիֆէստի» յայտնած միտքը կեանքի փոփոխած պայմաններին:

Յայտնի է, որ «Կոմունիստական մանիֆէստի» հեղինակները զրել են իմիջի այլոց և հետեւեալը. «Ներկայ բուրժուական հասարակութիւնը, որ կարծես կախարհութիւնն է ստեղծել արտադրութեան և փոխանակութեան այդքան զօրաւոր միջոցներ, նման է այն կախարհին, որը չի կարողանում տիրապետել իր դուրս կոչած ստորերկրայ

ոյժերին... բաւական է յիշել առեւտրական ճգնաժամերը, որոնք իրենց պարբերական կրկնութեամբ միշտ աւելի և աւելի սպառնում են բուրժուական ամբողջ հասարակութեան գոյութեանը: Այդ նշանակում է ահա թէ ինչ.—կապիտալիզմն ինքն իր մէջ է կրում իր կործանման աղբիւրը, որովհետեւ նրա մէջ գրած է տարբերային մի ձգտում՝ դէպի անասման աճեցողութիւն, որը բնականօրէն և անհրաժեշտաբար տանում է դէպի աւել-արտադրութիւն. իսկ աւել-արտադրութիւնն ստեղծում է ճգնաժամեր, որոնք կորստաբեր ազդեցութիւն են անում կապիտալիզմի վիճակի վրայ և, վերջի վերջոյ, կը գրորեն նրան, ուրեմն և բուրժուազիային՝ գերեզման: Այդ փառահեղ հիպոթէզի տրամադրութեան տակ կար նաև մի այլ լրացուցիչ, օժանդակ հիպոթէզ: Աերջինիս էութիւնը այն էր, որ կապիտալի աճման պրօցեսի ժամանակ՝ կապիտալիստները թիւը, շնորհիւ նրանց մէջ գոյութիւն ունեցող դաժան կուրի, քանի գնում՝ աւելի և աւելի քշանում է: «Կապիտալիստական արտադրութեան վերջնական հետևանքը, գրում էր երբեմն Լիբեյէխտ իր «Zur Grund-und Bodenfrage»-ի մէջ, լինելու է սեփականութեան հարստութեան իւրեանքը և իշխանութեան կենտրոնացումը մի և նոյն ձեռքերում: Միակ մի լենդլորդ, տէր և տիրական բոլոր հողերի ու գործարանների—մի հօտ և մի հովիւ, մի ճորտատէր, որ իր խորագանով աշխատանքի է քշում իր գիւղական և քաղաքային ստրուկներին—ահա ներկայ կապիտալիստական կալուտարայի ծայրակէտը, նրա վախճանական նպատակը և իդէալը: Եւ հիշարկէ միացած «ստրուկների» համար շատ հեշտ կը լինէր գերեզման գլորել Քայդպիսի «մի միակ լենդլորդին»:

Սակայն կապիտալիզմի ինքնաշնչման այդ սրտառու թէօրիան—ինքնաշնչումն ճգնաժամերի և բոլոր հարստութիւնների ու իշխանութեան մի քանի ձեռքերում կենտրոնացման՝ ճանապարհով—այժմ սօցիալ-դեմոկրատական բուրժուազիայի թէօրեւորակները մի կողմ են թողել: Եւ ահա թէ ինչու: Լաւ յայտնի է, որ, նախ և առաջ, կապիտալիստների թիւն իսկապէս աւելանում է, ոչ թէ պակասում. իսկ երկրորդ՝ կապիտալիզմը սովորել է արդէն ապահովել իրեն ճգնաժամերից, որոնք կապուած են անտեսական կեանքում տիրող անիշխանութեան հետ—արդիւնաբերական ամեն տեսակ սենդիկատներով և արտաքին ու ներքին շուկաներն անընդհատ մեծացնելով, այնպէս որ ժամանակակից բուրժուազիան այժմ իրեն զգում է գուցէ շատ աւելի կայուն, քան այն երջանիկ ժամանակները, երբ «Սոմնոնիստական մանիֆէստն» այնքան համարձակօրէն մարդարէանում էր նրա անխուսափելի և շուտափոյթ կործանումն իր սեփական ցանցերում: Սակայն՝ չը նայելով այդ ամենին, սօցիալ-դեմոկրատիան ընդհանրապէս և մեր արձագանք-սօցիալ-դեմոկրատները մասնաւորապէս, շարունակում են պընդել որ բանւորական սօցիալիստական շարժման յաջողութիւնն ուղղակի կերպով կապակցւած է կապիտալիստական անտեսութեան յաջողութեան հետ:

1895 թւին՝ Բրեսլավի սօցիալիստական կենդրէում Բէրէլը յայտնեց, որ ինքը կարող է ընդունել միայն այնպիսի մի ազդարային նախագիծ, որը «չէ խանգարում հասարակութեան կապիտալիստական զարգացումը»: Աիէնայի սօցիալիստական կոնգրէսում՝ աւստրիական սօցիալ-դեմոկրատիական կուսակցութեան առաջնորդ Ալէքը աւելի ևս պարզաբար խօսեց այդ հարցի մասին: «Մենք, ասեց նա, պետք է պաշտպանենք արտադրական ուժերի տեխնիկական զարգացումը և աճեցողութիւնը այնչափով, որչափով որ նրանք նախապատրաստում են սեփականութեան համայնացրած ձևի հողեկան և նիւթական պայմանները. մենք պէտք է ծառայենք այդ գարգացմանը, և այնտեղ, ուր խնդիրը վերաբերում է այդ նախնական պայմաններին՝ մենք պէտք է բոլորովին գիտակցաբար օգնենք նրանց շուտափոյթ ծագումանը»:

Ահա հէնց այդ միտքը, —ինչ կուզէ լինի՝ ան-

հրաժեշտօրէն պաշտպանել կապիտալիստական արդիւնաբերութիւնը—մի միտք, որ պաշտպանում է նաև ուսուսական սօցիալ-դեմոկրատիան, —չեն ընդունում սօցիալիստ-յեղափոխականները. սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը չէ ընդունում ներկայ արդիւնաբերութեան հիմքերը ցնցելու վերաբերմամբ եղած երկիւղը, որ պաշարել է նաև մեր սօցիալ-դեմոկրատներին: Եթէ բուրժուազիան և պրօլետարիատը, ասում են սօց.-յեղափոխականները, իրար թշնամի են րստ էութեան, եթէ այդ երկու կուսող դասակարգերի շահերն անհաշտելի և հակադիր են, հնարաւոր է ուրեմն՝ որ նրանց ապագան կառուցելի միևնոյն հիմքերի—կապիտալիզմի աճեցման և զարգացման վրայ: Դա ակներև անմտութիւն է: Այն փաստից, որ կապիտալիստօրէն զարգացած անտեսութիւն ունեցող երկրներում բանւորական շարժումն աճում է, —այդ փաստից դեռ ևս չէ հետևում, որ բացի կապիտալիզմից՝ չը կան այլևս ուրիշ ուղիներ դէպի սօցիալիզմը. սօցիալիստական գիտակցութիւնը մասսաների մէջ ամրապնդւած է թէ կապիտալիզմի կապուածութիւնը իր շնորհիւ, այլ հակառակ նրանց: Եւ իսկապէս՝ ի՞նչ կարելի պրօլետարական զարգացման տրխուր անհրաժեշտութիւնը բուրժուական կարգերի շրջանանում՝ զարմնել անխուսափելի թէօրիա, որի վրայ իբր թէ անհրաժեշտ է կառուցանել ծրագրային և տարբիքական բոլոր հաշիւները: Այնտեղ, ուր ինքը պատմութեան ընթացքն տուել է բարեյաջող պայմաններ երկրի կապիտալիստական զարգացման համար—ինչպէս օրինակ՝ Անգլիայում կամ Գերմանիայում—այնտեղ ծիծաղելի է յանձնարարել ինայող վերաբերմունք դէպի նա, ծիծաղելի է այն պատճառով, որ պրօլետարական շարժումը փաստօրէն չէ կարող խանգարել այդ զարգացումը: Այնտեղ, կը նշանակէ, մնում է մի բան, օգուել բուրժուական կարգերի շրջանակում բուրժուազիայի միջոցներից զարգացնելու աշխատաւոր մասսաների սօցիալիստական գիտակցութիւնը:

Սօցիալ-դեմոկրատների և սօց.-յեղափոխականների միջև տարաձայնութեան մի էական կէտ ևս կայ:

Սօցիալ-դեմոկրատները ենթադրում են, որ Ռուսաստանում սօցիալիստական մկրտութեան ենթակայ են միայն քաղաքների պրօլետարիատը. իսկ գիւղացիութիւնը—մանր բուրժուական, յետադիմական—չէ ենթարկւում սօցիալիստական պրօպագանդի, որովհետեւ նա ամբողջապէս խմորած է մանր սեփականատիրական բնազդներով: Ճշմարիտ է, ներկայ ուսուսական գիւղացիութեան յեղափոխականութիւնը մեր սօցիալ-դեմոկրատիան այժմ արդէն չէ մերժում: Բայց, ասում է նոյն սօց.-դեմոկրատիան, մանր—բուրժուական իր պահանջների իրականացման համար յեղափոխական լինելուց մինչև լայն, միջազգային սօցիալիստական դօկտրինը—դեռ շատ հեռու է:

Սօցիալ-յեղափոխականներն, ընդհակառակը, խիստ սահմաններ չեն դնում քաղաքային պրօլետարի և աշխատաւոր գիւղացիութեան միջև: Այդ պատճառով նրանց մարտական դրօշակի վրայ գրած է, պաշտպանել ուսուս ժողովրդի բոլոր աշխատաւոր, կեղեքւած տարրերը, առանց հաշի առնելու, թէ որտեղ են նրանք ճորտացրւած դաշտում թէ գործարանում, գիւղում թէ քաղաքում:

Մենք արդէն ասացինք, որ մեր մարքսիստների ընդհանուր տեսական հայեացքների մեջ կապուած են նրանց ազդարային ծրագիրը և մասնաւորապէս տակտիքը:—Սակայն այդ մասին հետևեալ անգամ:

Վ. ԱՐԱՐԱՍՅԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ի Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Անգլիան պարզապէս նւերւած է անտեսագիտութեան. Գերմանիան մտաւորական կատարելագործու-

Թիւններու և Ֆրանսան կեանքի հասարակական ֆազերուն: Անգլիան 200 տարիներէ ի վեր ժողոված է այն ամեն արժէքաւոր բաները, որ ասդին ու անդին ինկած կը մնային և բոլոր գաղթավայրերու միջոցով նըպաստեց իր արդիւնաբերական և վաճառականական մեծութեան: Գերմանիան վերջին 100 տարիներու մէջ գիտութեան, գեղարւեստի, գրականութեան, երաժշտութեան, բնագիտութեան և բժշկութեան մէջ աւելի հըրաշքներ արտադրեց, քան որեւէ ուրիշ ազգ մը, սակայն յաջողութիւն չէ ունեցած որեւէ մեծագործութեան կամ ծաւալման մէջ, որ պարկեշտ և մտաւորական հիմերու վրայ չէ հաստատուած: Ֆրանսան ամենէն աւելին ըրաւ իր ամբողջ ժողովուրդին համար, կամ աւելի ճիշդ ըսելով իր ժողովուրդը վարժեցուցած է ձեռք անցնելու ամենէն շատ հաճոյք և բարեկեցութիւն, աշխարհի վրայ գտնուող ո՛րեւէ ժողովրդի, ամենէն փոքր ջանքովը:

Ամերիկան քիչ ունի Անգլիոյ տնտեսագիտական կորովամտութենէն, Գերմանիոյ իմացական նրբամտութենէն, կամ Ֆրանսայի ընկերական ներդաշնակութենէն: Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն իր ապագան կամ չպիտի ունենայ ապագայ մը: Ես ո՛չ մարգարէ մըն եմ և ոչ ալ մարգարէի գաւակ, բայց սոսկ Եանքի մը և իբր այդպիսին՝ իրաւունք ունիմ կարծելու, պիտանի Եանքի կարծիք յայտնելու, այն, թէ՛ Ամերիկա մարդկութեան վերաբերեալ հարցերը պէտք է լուծէ:

1620 էն մինչև 1898 իրօք երեք դար Ամերիկա ապաստարանը եղած է աշխարհի վշտակիրներու և կոխտուածներու: Ամէն մէկը աշխարհի որեւէ ծայրէն կրնար հոս գալ և սիրով ընդունել: Քօշութ և Գարիբալդի, Իրլանտայի լքածը, Ռուսաստանի հարստահարածը, Իտալիոյ սովամահը, Հայաստանի կեղբեալը կրցան այստեղ գալ և ազատութիւն գտնել և այսօր մեր մէջ կը գտնուին հարուստ և ազգեցիկ անձնաւորութիւններ՝ աշխարհի քաղաքակիրթ ազգերու տանջուած ժողովուրդներէն:

Տասը տարիէ ի վեր Ամերիկան աշխատեր է ուրիշ երկիրներու ծանրութիւնը վերցնելու, վէրքերը դարմանելու և թուլասիրտները քաջալերելու: Նա Սպանիոյ ձեռքը կեցուց Բուպոյի մէջ, դապարեցուց Ծայրագոյն-Արեւելքի անգութ պատերազմը և արգելեց Միջերկրականի արևելեան ափերու վրայ յօտաւրուտ պատերազմը: Այժմ Հայաստանը կը կարօտի անոր ազգեցութեան, անոր համակրութեան, անոր խորհրդին և անոր հզօր աջ բազուկին: Եւ Ամերիկան կարօտ է իր կողմէն կորուվապնդումի առաքելութեան մը, որուն Հայաստանը զինք կը հրաւիրէ:

Ազգող ջուրը միշտ մաքուր է և վճիտ. անշարժ ջուրը միշտ կը լճանայ և ժահասփիւռ ու նեխած կը դառնայ: Նոյնիսկ բարոյական առաջադրութիւն մը, ամենէն բարձր բարոյական նպատակ մը, առանց գործունէութեան կը լճանայ: Գործունէութիւնը ոչ մի տեղ այնքան անհրաժեշտ է, որքան առաքինութիւններու պարագային: Արդէն կատարուած գործերը սնապարծ հպարտութեամբ պաշտելը՝ կը տանի զէպի ունայնամտութիւն, որ իբր քաղցկեղ՝ ազգային կեանքի նեարդերուն մէջ կը ստողոսկի:

Ամերիկան առաքելութիւն մը ունի Հայաստանի՝ մէջ, Հայաստանը պատգամ մը ունի Ամերիկայի համար: „Արեւնիս“ ԴՐ. Ա. Է. ՌԻՒՇԻՊ ԽՄԲԱԳԻՐ

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԿԻՉՔԸ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ**

Համարեա նոյն միջոցին, երբ Նիկոլայ Վերջինը փակեց ռուսական դուրան, սլավ բռնապետութեան համեստ, մոռացած հարեանը՝ Իրանը հանդէս եկաւ մի նորութեամբ, որ բերկրանք պատճառեց պարսիկ ժողովրդին և ժպիտ՝ քաղաքակիրթ մարդկութեան:

Շահը շնորհեց Պարսկաստանին սահմանադրութիւն — ահա նորութիւնը, հաղորդուած Թէհրանից, ուր մի քանի ամսից ի վեր պալատական կեանքը և քաղաքական — կրօնական բարձր շրջանները ենթակայ էին խուլ կուրի, հին և նոր կուսակցութիւնների բուռն մրցման, յաճախ յանուն պաշտօնների և անձանց, երբեմն էլ յանուն վարդապետութիւնների: Եւ այդ կուրի ու մրցման արդիւնքն է ահա այն յաղթանակը — գուցէ ժամանակաւոր — որ տարաւ առաջադէմ խումբը, ստիպելով Շահնշահին զիջանել և յայտարարել Իրանի սահմանադրութիւնը:

Նորին Մեծութիւնը պատերեց — ասում է կիսապաշտօնական ծանուցագիրը — կազմել մի ազգային ժողով, որի անդամները կը ջոկեն, ընտրողական ճանապարհով, արքայազնների, հոգևորականների, բարձր շրջանների, վաճառականների և այլ դասակարգերի միջից: Ազգային ժողովը կը գումարի Թէհրանում և կը խորհրդակցի պետական բոլոր կարևոր խնդիրների մասին. ժողովի իւրաքանչիւր անդամը ամենայն ազատութեամբ կարող է արտայայտել իր կարծիքը՝ երկրի վիճակը բարեկարգելու խնդիրների վերաբերմամբ: Ժողովի որոշումները մեծ վեցիրի միջոցով կը հաղորդուին ի գիտութիւն Շահի, ու կը ստանան օրէնքի ոյժ՝ կայսերական վաւերացումը ստանալուց յետոյ:

Մուզաֆէր-Էգգին Շահի այդ զիջումը՝ իրօք կարող է հիմք ծառայել ապագայ սահմանադրութեան, եթէ միայն պալատական-կղերական նոր ինտրիգները չըխափանեն սկսած գործը: Ճշմարիտ է, սա զեռ սկիզբն է: Նա չի կրում ռամկավարական դրօշմ, և չէ բոլորով ժողովրդական յեղափոխութեան խաւերից — բայց նկատելով որ Արևելքի բնահար ժողովրդների կեանքում յաճախ մեծ և կարևոր յեղաշրջումները վերեկն են բըղխել, կարող ենք յուսալ, որ ներկայ որոշումը, իբրև սկիզբն սահմանադրութեան, Իրանի ժողովուրդների կեանքի մէջ կը բանայ մի նոր դուռ՝ ազատութեան և քաղաքացիական — սօցիալական լաւագոյն կարգերի համար:

Գարեւոր ճահիճներն անգամ շարժում՝ ալեկոծում են: Գաղափարի յարաճուն շարժման յաւիտենական նշանակն է այդ: Եւ ոչ մի ցարիզմ, ինչքան և ամբարտաւան, ոչ մի սուլթանականութիւն, որքան և մարդակեր, ոչ մի Շահ, որքան և յետադէմ, — չը պիտի կարողանան դիմադրել գաղափարի շարժման, որ նոյնքան հուժկու է, որքան հեղեղը, նոյնքան անդիմադրելի, որքան գլորուող ժայռը...

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

„ԳՐՕՇԱԿԻ“ ԱՐԳԵԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ

„Գրօշակի“ Պարսկաստան մանկալու արգելման տեղեկութիւնը ստանալուն պէս, մենք յուլիսի 27-ին դիմեցինք պարսից բարձր կառավարութեան հետեւալ բարձր-հեռագրով.

Արտաքիմ գործերի մինիստրին

Թ. Ե. Տ. ր. ան.

Փոստերի և մաքսի վարչութեան կարգադրութեամբ, յուլիսի 3-ից, „Գրօշակի“, ինչպէս և ժընեվի մեր այլ հրատարակութիւնների մուտքը Պարսկաստան՝ արգելւած է: Պարսկաստան հասած համարները արգէն գրուած և այլուած են: Մենք թոյլ ենք տալիս մեզ՝ բողոքելու. ձեր առաջ այդ կարգադրութեան դէմ, որը ոչ մի արդարացումն չունի, քանի ոչ „Գրօշակը“ երբեք չէ զբաղւել Պարսկաստանով և 16 տարուց ի վեր ազատ մուտք ունէր ձեր երկիրը: Մեր կուիւր ուղղած է թիւրք և ուրս կառավարութեան դէմ: Հաստատուած հաւատարմ կը որ ձեր միջամտութեան չնորհիւ՝ Հասի կառավ. լութիւնը կը վերահաստատէ մեր իրաւունքները, իբրև արգարութեան պահանջ Պարսկաստանի հայերի վերաբերմամբ:

Խմբագրութիւն „Գրօշակի“

Օրգան Լ. Յ. Գաշակց.

Նոյն օրն և եթ հեռագրելով այդ բողոքի պատճէնը Պարսից և Բերլինի Պարսից գեապաններին, հրաւիրեցինք նրանց ուշադրութիւնը „արտաքին ինդրիզների այդ փաստի վրայ“, որպէս զի նրանք ևս անեն հարկաւոր քայլերը՝ մեր արդար պահանջին լիութեան տալու համար:

Հրամանը կատարելու գործում, ինչպէս մեզ տեղեկացնում են Գաշակցական մարմինները, պարսկական տեղական իշխանութիւնները ցայց տեղեյն բացառիկ եռանդով „Գրօշակի“ 6-րդ համարի հազարաւոր համարները, ենթարկեցին ոչնչացման՝ պաշտօնական բոլոր ձեւակնութիւնների համապատասխան խտրութեամբ: Ահա այդ առիթով կազմած պաշտօնական արձանագրութիւններից մէկը.

Ոչնչացմամ արձանագրութիւն

1906 թւի յուլիսի 17-ին, այն է 26 բամատան 1324, մենք ներքև ստորագրեալ Գուհեմ և Հասան խան, տեսուչ մաքսատանների և փոստային կառավարիչ, Էնդէլի քաղաքում, հաստատում ենք հետեւեալը.

Ներկալ յուլիսի 13-ին, կեսօրից յետոյ ժամը 4-ին, ընդհանուր տեսչի կարգադրութեամբ և համաձայն մինիստրական հեռագրի, 1906 թ. յուլիսի 26-ից, համար 24.657, մենք ներկայութեամբ մաքսատան մի քանի պաշտօնականների, ձեռնարկեցինք կատարեալ ոչնչացմանը, կրօնակի միջոցով, հայոց „Գրօշակի“ լրագրի 1170 օրինակների, ստացւած Հվեյարիայից, 15—20 հատանոց կապոցներով և ուղղած զանազան անձանց հասցէին, որոնք ապրում են Թէհրան, Ռաշա, Էնդէլի, Ջուրա, Իսպահան, Համատան, Բալթրուշ, Հասրուզ և Ղազվիւ:

Կազմւած է երեք օրինակ, վերայիցեալ արք, ամսին և թւին: (Ստորագրութիւն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԱՆ ԱԶԻ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Գ Ա Շ Ն Ա Կ 8 Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Ի Ն

Հնչակեամ աղբիւրներից լուրեր են տարածել թիֆլիս և Բագու, որ դաշակցականները սպանել են Զ. ի շրջա-

մում 3 հնչակեամ զինուորներ և վիրաւորել են մի քանիսին: Այս ցաւալի դէպքի առթիւ մենք սպասում ենք մեր մարմնի տեղեկութիւններին, ինչպէս ճակ զեկուցում մի ընկերոջ կողմից, որը ամցում է յիշեալ շրջանը և որիմ յանձնարարւած է քննել ու պարզել սպանութեան պարագաները ամենայն մանրամասնութեամբ: Սպասելով քննութեան հետեւանքներին, Հ. Յ. Դաշակցութեամ Արեւելեամ Բիւրօն պարտք է համարում այնուամենայնիւ յանձնարարել մեր բոլոր ընկերներին, որ ամեն միջոց գործ դնեն ամհնարին դարձնելու որևէ զիմաձ ընդհարում հնչակեամների և դաշակցականների միջև, և եթէ լինեն առիթներ հնչակեամների կողմից, չպատասխանեն յորանց ամիջապէս, այլ խնդիրը դնեն խառն մասնաժողովների քննութեամ, կազմւած երկու կողմի ներկայացուցիչներից և չէզոք անձերից:

10 յուլիսի, 1906.

ԿՈՎԿԱՍ

Հ. Յ. Դ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Վերականգնում Ռիւօն սացած է՝

Ռոն սասան.— „ԳՐԱՄ“ Կոմիտէն 4000 ֆր.:  
Ջուրից Իա.— Բաւուէրէն 6ւեր 5 ֆրանկ:  
Սերբիա.— Շաքաց Բաղաւէն Սս. Գաւ. ի մէջ. 40 ֆր.:  
Ընդհանուր գումար 4045 ֆրանկ:

Մրգասանի Կենտ. Կովիտէ՝

ԱՉԱՏ ԳԱՇՏԻ ՇՐՋ.՝ 1903 թ. սեպտեմբեր 15-ից մինչև 1904 թ. դիտ. 9-ը: Պեղաւու Պարեկ գիւղ 934. 25, Ազնիւ գիւղ 814. 11, Բոյն գիւղ 303. 20, Բարձր գիւղ 138. 45, Ազուս դաւեսի երկու խից 24, Խնձոր գիւղ 69. 15, Ազարակ գիւղ 370. 50, Արարուս գիւղ 366. 30 Գ. Եսափ գիւղ 39. 80, Հին Բաղաւ գիւղ 526. 80, Արմաւ գիւղ 207, Թառքաւ գիւղ 367. 59, Չիման գիւղ 843. 80, Հեղեղուս գիւղ 114. 25, Մարագոլիս գիւղ 95. 50, Մեծ գիւղ 21, Վարազ գիւղ 424. 91, Խառն գիւղ 143. 06, Նեմիլն գեափ գիւղ 336. 45, Խեթ գիւղ 232. 57, Երկաթ գիւղ 258. 10, Մաղ գիւղ 36. 10, Փուկ գիւղ 10, Աղջկաբերդ գիւղ 195. 55, Չայ գիւղ 42. 60, Հոր գիւղ 161. 80, Կողի գիւղ 112. 10, Մաղկախնձոր գիւղ 160. 45, Հարեւան գիւղ 205. 10, Շամք գիւղ 60. 10, Գեղակ գիւղ 130. 15, Անցաս գիւղ 369. 50, Կերիչ գիւղ 61. 30, Գազար գիւղ 27. 45, Մասնաւոր հանգանակութիւններ և մի քանի խառը գիւղեր. 834. 74, Ջրաբախեանից տուգանք 3000, Պ. Ա. ից տուգանք 1400. Գումար 13437 ռուբլի 73 կոպէկ: ԱՊՇԵՔՊԱՄԻ ՇՐՋԱՆ՝ Հեթեւալ գիւղերից Գ. 665. 85, Սեւ 140. 52, Առ 24. 25, Ե. 126. 85, Է. 27. 30, Թ. 114. 21, Մ. 74. 70, Պ. 27. 65: Գումար 1201 ռուբլի 33 կոպիկ: (Շարունակելի)

Դահլիճի Եճրակովիտէ՝

Գ. Մաղումեան, Գ. Միխայլեանի մահան առքի փոխան ծաղկի փոնցի 100 դան. ևս իւր հինգ տոնայ վնարումը 100, Մ. 2. իւր տանտեայ վնարումը 100, Սուրէնի միջոցաւ Եւրեներ՝ Սուրէն 30, Կալիկ 70, Կարաօ 30, Յ. Ասանուրեանէ 200, Տէրվ Եղբար՝ 30, Է. Էն 5. Գ. Պահլու իւր մէկ տարայ վնարումը 60, Թանքայէն՝ հանգանակութիւն՝ սրբ. Սարգիսի սօնի առքի 198, ևս Վարդանանց 205, Արուսեակ խումբ Թանքա 840, Հայկ խ. Հայկազունի ձեռամբ 80, Կորոյն խ. Պայաղիսի միջոցաւ 422.5, Ա. Տէր Ա. ի ձեռամբ 120, Մ. սոկունի խ. Տիրուցի միջոցաւ 105, Պաւազիսի միջոցաւ 130, Պարոյր խ. Մ. Ջ. ի ձեռամբ 120, Արա և Լուսինի խմբերէ Ե. Գ. ի միջոցաւ 745, Բաբկէնի միջոցաւ 255, Աբէրի միջ. 100: Արաւիր խ. Տ. Մ. ի ձեռամբ 35, Բաժմի խ. Ա. Սրվանեանի ձեռամբ 107, Վիտայեանի ձեռամբ 130, ՀԱՄԱԿԻՎ ԽՈՒՄԲ՝ Պ. Ե. 30, Մ. Մ. 20, Բ. Գ. 20, Վ. Գ. 20, Մ. Օ. 10, Ս. Ա. 10, Ս. Մ. 10, Ս. Ս. 10, Յ. Փ. 30, ՋԱԻԷՆ ԽՈՒՄԲ՝ Տ. Բ. 80, Մ. Կ. 90, Մ. Օ. 70, Ե. Ե. 35, Մ. Մ. 10, Մ. Վ. 25, Ար. Արժունի 25, Կ. Թ. 45, Վ. Վ. 10, Վ. Ա. 10, Գ. Ա. 45, Կ. Բ. 10, Յ. Ե. 45, Մ. Թ. 45, Ա. Յ. 45, Վ. Գ. 45: ԱՐ. Մ. Մ. ԽՈՒՄԲ՝ Հ. Տ. 90, Ե. Թ. 90, Տ. Մ. 90, Օ. Մ. 50, Գ. Պ. 45, Ե. Բ. 45, Ա. Գ. 40, Ս. Ա. 35, Գ. Ե. 35, Կ. Գ. 30, Յ. Կ. 10, Մ. Ի. 10, Եճրակովիտէի ցանկին անդամներէն 150: Ընդհանուր գումար 6177 դան. ողջ և 5 միլիւն: